

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 21 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ 17-18

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Էջմիածնի Ընդ. Ժողովր
Կրօնք եւ Խաղաղութիւնք

Տ. Ճ. Խ.

Տ. Ճ. Խ.

ՀՈԳԵՒՈՐ

Ամերիկայի Ամենաբարձր Բանաստեղծը
Հաւատք Կամ Հոգիի Հեռադիտակը
Աստուծոյ Դիմքին Լոյսը
Մեծ Բայց Քրիստոնեայ Դիտուն մը
Կենդանի Փրկիչ մը
Աստուծոյ Նայե Եւ ոչ Մեռելին
Շնորհակալութիւնք կը Փոխե Դեպքերը
Տերունական Աղօթքը
Վկայութիւնս

ՊԱՏ. Կ. ՅԱՐԱՃԵԱՆ
Է. ԱՐՈՇԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Մարդուն Արժեքը
Ինչպե՞ս Գրուեցան Մեր հոգեւոր Երգերը
Յուսեր
Վարքեր ու Բարքեր
Դիտական Քրոնիկ

ՎԵՐ. Հ. ԱՇՃԵԱՆ
Ե. ՏԵՐ ՄԿՐՏԵՉԵԱՆ
ՏԻԿ. Ս. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Մ. ԱՐՍԼԱՆԵԱՆ
ՔԱՂԵՑ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՅԼՆԵՒԱՅԼ

Սուրբոյ Պետական Դանձր
Սուրբոյ Պետական Համալսարանը
Տնտեսական Նօթեր
Զահլէի Եկեղեցիին
Քեսապի Աւետ. Եկեղեցիին

Ս. ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ
ՏԻԿ. Մ. ՄԿՐՏԵՉԵԱՆ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՆՈՐ ԱԻԵՏԱՐԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, օտարեկան բաժնեգիրքն է 180 ղրուշ սեփրի։ Սուրբիոյ համար, և մէկ ու կէս տուլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար։

ՆՈՐ ԱԻԵՏԱՐԵՐԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Պատանիներու ընթերցանութեան համար կրթիչ գիրքերու պակասը խիստ զգալի է։ Այս կէտը նկատի առնելով՝ ձեռք ձեռքի միմեկին խմբագրութիւնը այս անգամ հրատարակած է՝

ԲԱՐՈՅԱՎԷՊԵՐ

անուն հատորիկ մը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական և բարոյացուցիչ 15 իրական պատմութիւններ և պատմութեամբքներ։ Ամէն պատանի, ինչպէս նաև դաստիարակներ և ծնողներ շատ օգտակար պիտի գտնեն զայն։ Գինն է 25 ղրշ. սուրիական (կամ 50 անթի Ամերիկայի և Եգիպտոսի համար)։ Դիմել խմբագրութեան հասցէին։

ՓԻԼԱՐՏՈՍ ՀԱՅՐԵՑ՝ ԿՈՄՍԱԳԵՆԱՅԻ

Կոմմագենացիին հմուտ պատմագէտ մըն է որ գիտէ հաճելի ոճով ներկայացնել անցեալի դէպքերը։ Հատորս 16 գլուխներով գեղեցիկ եւ քննական ուսումնասիրութիւն մ'է Հայոց Պատմութեան Կիլիկիան շրջանին սկզբնաւորութեան մասին։ Գինն է 10 Ֆրանք Սուրբիոյ համար, կէս տուլար ուրիշ երկիրներու համար։ Ծաւալն է 95+թջ էջ։ Դիմել ձեռք ձեռքի միմեկին խմբագրութեան հասցէին։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԴՐՈՒԱԳՆԵՐ ԿԵԱՆՔԻՍ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Տոքթ. Ա. Նազգաշեան 116 էջերէ բաղկացեալ այս հատորին մէջ իրեն յատուկ զուարճախօսութեամբ և սրամտութեամբ կը պատմէ իր կեանքին կարգ մը դրուագները մանկութեան շրջանէն սկսեալ մինչև հիմա։ Գինն է Ամերիկայի համար 50 անթի և ուրիշ երկիրներու համար 6 Ֆրանք։ Դիմել ձեռք ձեռքի միմեկին խմբագրութեան հասցէին։

ՊՕՅԶ ՀԱՅ ՍՔՈՒԼ

Վերաքննութիւնները պիտի կատարուին Սեպտեմբեր 26, 27, 28ին։ Նոր դիմում կատարող աշակերտներու արձանագրութիւնը և՛ եթէ պէտք է՝ քննութիւնը պիտի կատարուին Սեպտեմբեր 29, 30ին։ Դպրոցը դասաւանդութեանց պիտի սկսի Հոկտեմբեր 1, առտուան ժամը 7.45ին։ Գիշերօթիկներու բաժինը կը բացուի Սեպտեմբեր 30ի առտուն։

Այն աշակերտները, որոնք անգրիկէն դաս չաւանդող դպրոցներէն կուգան, առանց քննութեան պիտի ընդունուին, և անգլիերէնի պակասը լրացնելու համար մասնաւոր դասեր պիտի տրուին անոնց։

Բոլոր վերաքննութիւնները և արձանագրութիւնները Պաղտատի կայարանին մօտ դպրոցիս կեդրոնական շէնքին մէջ պիտի կատարուին։

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 21 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ 17-18

ԷԶՄԻԱՆՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Գէորգ Ե. Սուրենեանց կաթողիկոսի վախճանումէն ի վեր Առաք. Եկեղեցւոյ ընդհանուր վերին իշխանութիւնը կը գտնուէր Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի մը ձեռքը, և բոլոր հայերը առձեռն թեմաք կ'սպասէին այն երջանիկ օրուան երբ նոր հայրապետի ընտրութիւնը պիտի աւանտուէր հանրութեան: Ասկէ առաջ այս նպատակով գումարուելիք ընդհանուր ժողովի մը թուականը մի քանի անգամներ քառուկած, և միշտ ալ անոր գումարումը յետաձգուած էր: Այս պարագան շատերուն մէջ կասկած յառաջ բերած էր թէ այս անշուշտ և Հայց. Առաք. Եկեղեցիին համար վընասակար վիճակը տեւական դարձնելու փորձեր կրնան ըլլալ:

Թէ ինչպէ՞ս այս ժողովը յետաձգումի ենթարկուեցաւ, և թէ գումարումի ղէմարդը ընկերու որչա՞փը կառավարական շրջանակէ և որչա՞փը արտոյտ եկեղեցական շրջանակէ կը բղխէր զժողովը է մեզի համար ըսել: Բայց ուրախալի է որ ինչպէ՞ս որ ասկէ առաջ դրեցինք Գեր. Հոգեւոր Խորհուրդը վերջնականապէս Նոյեմբեր 10 որոշած է իբր ժողովի թըւական, երբ կ'ալնկալուի Գէորգ Ե. ի յաջորդը ընտրել:

Այս ժողովին հրաւիրուած են 130 պատուիրակներ կղերական և աշխարհական դասակարգէն: Դիտելի է որ Հայաստանի և Սովիէթ ռուսիա երկիրներու պատուիրակներու մեծամասնութիւնը աշխարհականներէ կը բաղկանան, մինչ գաղութահայութեան պատուիրակներուն համար պարագան ասոր

հակառակն է: Բայց կասկածելի կը թուի որ այսչափ մեծ թիւով պատուիրակներ կարինան էջմիածնի ժողովին մասնակցիլ, և կը թելադրուի որ անձամբ չմասնակցող պատուիրակները իրենց քուէները դրաւոր կերպով յայտնեն: Թէպէտ կարելի չէ որոշապէս ըսել թէ ո՞վ կաթողիկոս պիտի ընտրուի, բայց կրնանք ապահով կերպով ըսել թէ ան Սովիէթ կառավարութեան ամէնէն աւելի վստահութիւնը վայելող հայաստանաբնակ կամ ռուսաբնակ եկեղեցականներէն մէկը պիտի ըլլայ:

Բայց ինչ օր եկեղեցական ժողովը ամէնէն աւելի շահագրգռական կ'ընէ իր օրակարգին վրայ դրուած եկեղեցական բարեկարգութեան հարցն է: Հին հարց մըն է այս, որքան մասին թէ՛ անհատական և թէ՛ եկեղեցական կամ աշխարհական շրջանակները ներկայացնող և իրարու հակասական շատ մը կարծիքներ, թելադրութիւններ, ծրարներ հրապարակուած են: Այս բոլորին մէջ սակայն հողեւոր և վարդապետական կէտերը շոշափողներ քիչ տեղ կը գրաւեն, առաւելապէս վարչական, ծիսական, կանոնական բարեկարգութեան վրայ կը ծանրանան՝ մասնաւոր տիրող եկեղեցական շրջանակը: Բայց նուազագոյնն իսկ հաշուի առնելով՝ կատարուելիք բարեկարգութիւնը մեծ քայլ մըն է ղէպ ի յառաջ:

Այսչափն իսկ կարելի պիտի ըլլա՞յ իրաւործել, ահա կասկած մը, աւելի ճիշդը մտավախութիւն մը որ շատերուն միտքին մէջ կը սողայ: Եթէպէտք և

ղած թիւով կարեւոր պատուիրակներ ժողովի չկարենան մասնակցիլ, ժողովը ինքզինքը իրաւասութիւն պիտի գտնէ՞ հարցը լուծելու համար, կամ եթէ նոյնիսկ ժողովը հարցը սկսի խորհրդակցութեան նիւթ ընել պիտի կրնա՞յ պէտք եղած կերպով ազատօրէն չարժիլ: Ասոնք նկատի առնելով՝ արդեօք միայն բարեկարգութեան հարցին համար ունէ հայ գաղութի մը մէջ զատ եկեղեցական ժողով մը ընել կարելի պիտի ըլլա՞յ՝ էջ-

միածնի կաթողիկոսութեան վերին հաւանութեամբը, և կամ ապա անգամ հետազօտութեանց ծրագրի՞ր մը պիտի ճշդուի, մօտաւոր ապագայի յետաճը պելով վերջնական տնօրէնութիւնը՝ ինչպէս որ ոմանք կը թելագորեն: Մօտիկ ապագան այս հարցումն երբեք պատասխանէ: Մինք երկնային իմաստութիւն և քաջութիւն կը մաղթենք Հայց. Եկեղեցոյ վերին իշխանութեանց այս հարցը լուծելու մէջ:

ԿՐԾՆՔ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Այսօր մարդիկ աւելի քան երբեք խաղաղութեան, իրական խաղաղութեան կը կարօտին: Խաղաղութիւնը վրդովող պատճառները, շատ անգամ ալ չափազանցեալ տեղի մը, մամուլի մէջ միշտ կը հրատարակուին: Կարելի է ըսեմք չէ շատ մը միջազգային և ազգային հարցերու լուծումը ուղղակի կամ անուղղակի կերպով միջազգային խաղաղութենէն կախում ունի: Պետութիւններ, ազգեր, ցեղեր, իրենք զիրենք պաշտպանելու համար մեծ ճիգեր կ'ընեն, աքտակարգ միջոցներ կը հնարեն: Բայց այս պաշտպանութեան միջոցները անկարող կը մնան խաղաղութիւնը ապահովելու և վատահոլութիւն ներշնչելու: Եւ մեծ ազգերը միատեղ կռիւն զինազեղջումի ժողովի մը մէջ հարցը լրջօրէն նկատի առնելու: Ժընեւի մէջ գումարուած այս ժողովը զըրեթէ ոչինչ կատարեց իր նպատակը իրաւագործելու մէջ: Բայց Օգոստոսի ճիշդ կէսին միջազգային խաղաղութեան հարցով զբաղող ուրիշ ժողովներ ալ կատարուեցան:

Եկեղեցական Խաղաղութեան Միութիւնն անուն կազմակերպութեան քարտուղար Տր. Հէնրի Էթքինսընի նախաձեռնութեամբ պակէ հինգ վեց տարի-

ներ առաջ կազմուած էր մարմին մը՝ Կրօնքի Միջոցաւ Միջազգային Խաղաղութեան համար Համաշխարհային խորհրդաժողով անունով, որուն նպատակն էր. — (1) Որքչիլ թէ աշխարհի քրիստոնեայն ոչ քրիստոնեայ բոլոր կրօնքներու մէջ խաղաղութեան սկզբունքը որչափ տեղ ունի, և (2) Միջոցներ ստեղծել միջկրօնական համագործակից աշխատանք թափելու՝ համաշխարհային խաղաղութեան համար: Այս կազմակերպութեան գործադիր կոմիտէն չորս մասնախումբեր որոշած էր հարցին չորս գլխաւոր մասերը ուսումնասիրելու և իրենց տեղեկագիրը պատրաստելու համար: Անցեալ տարի Պատերազմի Պատճառները ուսումնասիրող մասնախումբը իր տեղեկագիրը հրատարակած էր: Այս տարի Գործադիր կոմիտէն Ժընեւ գումարուեցաւ միւս մասնախումբերու տեղեկագիրները լսելու համար:

Երկրորդ և երրորդ մասնախումբերը, որոնք իրենց աշխատանքները յառաջ պիտի տանէին առաջին մասնախումբի տեղեկագրին տուեալներուն վրայ, կատարելապէս չէին պատրաստած իրենց տեղեկագիրները այլ միայն ընդհանուր մէկ յատակագրի՞ն ներկայացուցած են:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԵՐԿԱՅ ԱՄԵՆԱՆՇԱՆԱԻՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Միացեալ Նահանգներու ապրող բանաստեղծներուն ամենահռչակաւորը անկասկած էտուին Մարխամ է, որուն լաւագոյն քերթուածը կը կոչուի (The Man With the Hoe) Մարկեդով Մարդը: Մարխամ իր առօրեայ գործերը կը կարգադրէ ճիշդ իր այս ոտանաւորին մէջ արտայայտուած հոգիին համաձայն: Այս օրերի ծեփերի աստղը, իր 80 տարիքին մէջ կը քալէ, կը ապրի, կը խօսի հրեսուն տարեկան մարդու մը պէս: Ան տակաւին կը ճամբորդէ իր հրկրին ամէն կողմերը՝ հրեմն օրական երկու երեք անգամ ատեն խօսելով, անիկա անկուշտ ընթերցող մըն է, կը սիրէ հասարակ մարդոց մէջ խառնուիլ, և տակաւին մեծ աշխատող մը և արտագրող մըն է:

Ամերիկայի պահպանողական պարբերութիւններէն մէկուն մէջ «Աշխարհի Ապրող Տասը Բրիտանիաները» խորագրով հրատարակուած յօդուածի մը մէջ

Մարխամի անունը այս խումբին մէջ յիշուած է: Այդ թերթը գրած է.

«Ան այնպիսի կերպով մը կ'ապրի որ աշխարհը պիտի զարմանայ եթէ իրմ գոթիւններուն տեղեկ ըլլայ:

«Ես կրնամ յիշել որ երբ զայն պատգով մը տանէի քիչ մը ճոխ ճաշի մը համար, մինչև ճաշին վերջը անհանգիստ կ'ըլլար: Անգամ մը իրեն հարցուցի թէ ի՞նչ է իրեն նեղութիւն պատճառող բանը, և մանուկի մը պարզութեամբ պատասխանեց. «Ձեմ կրնար հոս նստիլ շաշտօրէն պատրաստուած ճաշի մը համար հրք խորհիմ թէ բաւականաչափ ուտելիքէ զուրկ հազարաւորներ կան աշխարհի վրայ: Ի՞նչո՞ւ աւելի չափաւոր ճաշարան մը չերթանք և ուրիշներուն համար գրամ չխնայենք: Ձեմ հաւատար որ պէտքէն աւելի ուտելու իրաւունք ունենանք, եթէ խոնարհ նազովքեցիի հետեւողներն ենք, և զԱյն լրջօրէն նկատի կ'առնենք:»

ՀԱՒԱՏՔ, ԿԱՄ ՀՈԳԻԻ ՀԵՌԱԴԻՏԱԿԸ

Մարդիկ իրենց հինգ զգայարանքներով փորձառական ծանօթութիւն կ'ստանան և այս կերպով կարող կ'ըլլան նրաթական իրերու մասին ընդհանուր համաձայնութեան գալ: Հոգեւոր զգայարանք մ'ալ կայ՝ որուն միջոցաւ մարդիկ կրօնական փորձառութեանց և գաղափարներու մասին ընդհանուր կերպով համաձայնութեան կրնան գալ: Հոգին աչքեր ունի, հաւատքի աչքեր: Հաւատքը հոգիին հեռագիրտակն է: Հաւատքը հին է աւելի քան բանականութիւնը, զգացումը՝ աւելի քան ճանաչումը, կրօնքը՝ աւելի քան գիտու-

թիւնը: Աստղերը աւելի հին են քան առաջագիտութիւնը, ժայռերը՝ աւելի քան հրկրաբանութիւնը: Կրօնքը հին է աւելի քան աստուածաբանութիւնը, կեանքը՝ աւելի քան փիլիսոփայութիւնը, ճշմարտութիւնը՝ աւելի քան գիրքերը: Հաւատքը բոլոր ճանաչումի նախահայրն է:

Կրօնքի մէջ, ինչպէս գիտութեան մէջ, կարգ մը բաներ պէտք է ենթադրենք եթէ գիտութեան խաղարկութեան մէջ օհէ յառաջդիմութիւն մը պիտի ընենք: Այս ենթադրութիւնները պէտք է փորձուին և անոնք պէտք

է ստուգուին օտ հիման վրայ՝ թէ մեր հարցերը լուծելու մէջ անոնք զործի կը ծառայեն թէ ոչ: Ես կ'ենթադրեմ որ քրոնիկ դարձած կասկածախառ, սկեպտիկութիւնը, միտքի անբնական վիճակ մըն է, և եթէ մինչեւ բնական նշանակէտը յառաջ տարուի ինքնակործանիչ է: Կ'ենթադրեմ դարձեալ թէ ամէն գիտնական տաւի իր հաւատայ քան իր աչքերուն տեսածը և իր ձեռքերուն շօշափածը, թէ կրօնական հաւատքը գիտական է, և թէ վերջապէս հաւատալ և գաւառիլ (believe) հոմանիշ չեն:

Հաւատքը իր իսկութեանը մէջ օտապէս կը բացատրուի: Հաւատքը՝ մարդուն հոգեկան (psychic) բնոյթին յարաբերութեամբ՝ ազացոյցի վրայ հաստատուած մտային գիրք մըն է: Աստուծոյ յարաբերութեամբ՝ Անոր կամքը իբր մեր կամքը ընդունող անձնա-

տուութիւն է, մեր անձեռքուն յարաբերութեամբ՝ հոգիին ըրողը թաքուն ուժերուն ազատ արձակումն է, և վերջապէս բանականութեան յարաբերութեամբ հաւատք կը նշանակէ քաջութիւն, բանականութեան հաստատած ուժէ բանի մը նետակելու քաջութիւն:

Հաւատքը լուազոյն կերպով կը ճանչցուի կեանքի մէջ կատարած քանակ: Հաւատքը ներշնչում կուտայ լուսարանութենէն առաջ: զոհարեցող ծառայութիւն կուտայ առանց տառապանքի դէմ երաշխաւորութեան, քաջութիւն կուտայ վտանգը գիմարեմէն: Եւ անոր յաղթելու և ոչ անոր դէմ պաշտպանութիւն փնտոելու: Եւ քաջութիւն կուտայ ճշմարտութիւնը փնտրելու ատեն կասկածելու: Հաւատքը հոգեւոր հեռագրիտակ մ'է, հեռուն գիտող մըն է:

(ՀԱՐՑԼԸՐ)

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԷՄՔԻՆ ԼՈՅՍԸ

Աստուած յոյս է: Ա. Յովհ. 1. 5:

Տեղը իմ յոյսս է: Սղմ. 27. 17

Ամէն առաւօտ արեւը կը ծագի, որուն լոյսին մէջ կը քալենք և մեր առօրեայ պարտականութիւնները ուրախութեամբ կը կատարենք: Այդ մասին խորհինք կամ չխորհինք արեւին լոյսը բոլոր օրը մեր վրայ կը փայլի:

Ամէն առաւօտ Աստուծոյ լոյսը իր գաւազներուն վրայ կը փայլի: Բայց Աստուծոյ գէմքին լոյսը վայելիլու համար, հոգին պէտք է Աստուծոյ դառնայ և Անոր վստահի որ իր լոյսը անոր վրայ փայլելու թողու:

Երբ կէս գիշերին նաւարհկում մը պատահի նաւորդները ի՛նչ անձկութեամբ առտուան կ'սպասեն: Որչա՛փ յաճախ օտ աղաղակը վեր կը բարձրանայ, Առաւօտը ե՛րբ պիտի ծագի:

Բրիտանոնեան ճիշդ այսպէս պէտք է Աստուծոյ սպասէ և համարեութեամբ հանդարտ կենայ մինչեւ որ Անոր լոյսը իր վրան ծագի:

«Աստուան սպասողներէն տաւի իմ անձս Աստուծոյ կ'օգտուէ» (Սղմ. 136. 6):

Ով իմ անձս, իւրաքանչիւր օրը այս աղօթքներէն մէկովը սկսէ:—

«ԲՈՒ ԾԱՌԱՅԻՒ ՎՐԱՅ ԵՐԵՍԻ ՓԱՅԼԵՑՈՒՐ» (Սղմ. 31.16):

«ՈՎ ՏԵՐ, ԲՈՒ ԵՐԵՍԻՒ ԼՈՅՍԸ ՄԵՐ ՎՐԱՅ ԾԱՌԷ:» (Սղմ. 4.6):

«ԲՈՒ ԵՐԵՍԻ ՓԱՅԼԵՑՈՒՐ ՈՒ ՊԻՏԻ ՓՐԿՈՒԻՆՔ» (Սղմ. 80.3, 7, 19):

Մի՛ հանդարտիր մինչև որ գիտնաս թէ Անոր գէմքին լոյսը և անոր օրհնութիւնը քու վրադ կուգայ: Ապա օտ խօսքին ճշմարտութիւնը փորձա-

առաջեամբ պիտի հասկնաս. «Անոնք
Գու նրեանի յոյսովը պիտի ֆայնն: Գու ա-
նունովը անկն օր պիտի ցնծան»: (Սաղմ.
89.15, 16):

Ո՛վ Աստուծոյ զաւակներ, հաւատա-
ցե՛ք թէ ձեր Հօրը ամենաջերմ փափաքն
է որ դուք բոլոր օրը Անոր լոյսին մէջ
մնաք և ուրախութեամբ: Ինչպէս ամէն
ժամ արեւի լոյսին պէտք ունիք, նոյն-
պէս երկնային լոյսը, Հօրը դէմքին
լոյսը անհրաժեշտ է: Արեւի լոյսը ըն-
դունած և անով ուրախ ըլլալնուս որ-
չափ որ վտանգիք, այնչափ վստահ
կերպով կրնաք յուսուլ թէ Աստուած
իր լոյսը մեր վրայ փայլեցնել կ'ան-
կայ:

Նոյնիսկ երբ մենք ամպեր պէ ունե-
նանք տակաւին արեւն ռելինք: Այս-

պէս դժուարաթիւններու մէջ Աստու-
ծոյ լոյսը անընդհատ քու վրագ պիտի
ըլլայ: Եթէ վստահ ես որ արեւը ծա-
գած է, բոլոր օրը լոյսը հաշտի կ'առ-
նես: Աստուծոյ յոյսը անկն առաւօտ ֆու
վրայ ծագիլը ապահովի՛, և կրնաս վստահ
ըլլալ որ այդ լոյսը բոլոր օրը քու հետդ
պիտի ըլլայ:

Հանգիստ մի՛ ընեք մինչեւ որ չ'ըսես
«Ծաւսեր կրնան զանաւոր որ ըսեն, ո՞վ մեզի
քարիք մը պիտի ցուցնի: Տե՛ր, ֆու դիմիդ
յոյսը մեր վրայ ծագի:» Ժամանակ տուր,
սպասէ մինչեւ որ այդ լոյսը քու սիր-
տիդ մէջ ծագի, և դուն նշմարտապէս
կարենաս ըսել:

«ՏԵՐԸ ԻՄ ՀՈՅՍՍ ԵՒ ՓՐԿՈՒԹԻՒՆՍ
է»: (Սաղմ. 27. 1.):

(Ա. ՄԸՐԷԹ)

ՄԵԾ ԲԱՅՅ ԳՐԻՍՏՈՆԵԱՅ ԳԻՏՈՒՆ ՄԸ

Միջոյնէլ Պարատէյ ԺԹ. դարու մե-
ծագոյն գիտուններէն մէկն էր: Աղ-
քատ դարբինի մը զաւակն էր ան և
փոքր հասակին կազմարարի մը քով աշ-
կերտ դրուած էր Հոնտոնի մէջ: Հոս
պարապ ժամերուն գիտական գիրքեր
կը կարդար: Նշանաւոր քիմիագէտ
Հըմֆրի Տէյլօր 1813 ին մինչ պետական
քիմիական աշխատանոցին մէջ կը գոր-
ծէր զայն իրեն օգնական առաւ: Ահա
անկից Կ'օգտի Պարատէյի փայլուն ըն-
թացքը: Անոր կատարած գիտական
գիւտերը շատ քնն Անոր հօր իմացա-
կանութեան մասին խօսելու ստան կը
ըսեն թէ շատ մը մարդերու խելքը անոր
գլխուն մէջ ամփոփուած է: Ան մա-
նաւանդ իր կատարած ելիկարական
փորձարկութիւններուն համար ծանօթ
է, և մարդկան ելիկարականութեան
հետքիչը եղած է:

Այսչափ զբաղեալ գիտուն մը տես-
նելով թէ ինք մեղաւոր մըն է չկրցաւ
Աստուծոյ հանդէպ իր պատասխանա-
տուութեան մասին չխորհիլ: Ոտնար-
հեցաւ, Յիսուսի յանձնաւեցաւ և ճշը-
մարիտ քրիստոնեայ մը եղաւ:

Պարատէյ 1867 Օգոստոս 26ին մինչ
մահուան անկողնին մէջ իր վերջին
վայրկեանները կ'ապրէր, բարեկամե-
րէն մէկը կամայ մը ծռելով իրեն հար-
ցոց. «Այս վայրկեանին մէջ ի՞նչ կար-
ծիքներ ունիք»: Պարատէյ հանդարտ
կերպով պատասխանեց. «Կարծիք, ես
կարծիք չունիմ: Ես մեռնելու վրայ ե-
ղող զլուխ կարծիքի վրայ չեմ հանգ-
չեցներ: Ես գիտեմ թէ որո՞ւ եմ հաւա-
տացեր. և համոզուած եմ որ իմ իրեն
աւանդած բանս կրնայ պահել մինչեւ
այն օրը» (Բ. Տիմ. 1.12):

ԿԵՆԴԱՆԻ ՓՐԿԻՉ ՄԸ

Նաև մը Անգլիոյ արեւելեան կողմը փոքր նաւահանգիստ մը մտած էր, ուր իր բեռը առնելու համար Աւագ Ուրբաթըն ալ անցնելու ստիպուած էր:

— Այսօր դրօշը կէտ բանա՞մ, հարցուց Բ. Նաւապետը Ա. Նաւապետին:

— Ինչո՞ւ հարցուց Ա. Նաւապետը:

— Այսօր մեր Տէրն Յիսուսի մեռած օրն է, իբր օուդի նշան կէտ բանանք դրօշը, պատասխանեց:

Ա. Նաւապետը որ ճշմարիտ քրիստոնեայ մըն էր, ըսաւ.

— Յիսուս, իմ Փրկիչս, ոչ թէ մեռած այլ ԿԵՆԴԱՆԻ ՓՐԿԻՉ մըն է: Այս պատճառաւ դրօշը ճիշտ կայմին դա-

գաթը լման պարզեցէք:

Ընթերցող բարեկամ, մեր այս թանկագին Փրկիչ Յիսուսը իբր մեռելներէն յարութիւն առած մէկը կը ճանչնա՞ն: Անոր կնքեալ գերեզմանաքարը յաւիտեանս զլուորուած է, գերեզմանը պարօպ է, Յիսուս զօրութեամբ յարութիւն առած է և յաղթական եղած է:

«Անիկայ յարութիւն առաւ, հոս չէ. ահա այն տեղը ուր դրին զանիկան» (Մար. 16.6): «Մեր յանցանքներուն համար մասնաւորապէս, և մեզ արգարացընելու համար յարութիւն առաւ» (Հով. 4.25): «Ուստի մենք հաւատքով արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսի ձեռքով» (Հով. 5.1):

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ

Տէրունական Աղօթքը Քրիստոնէական վարդապետութեանց ամփոփումն է: Ան աղօթքներու Աղօթքն է: Կարճ ըլլալով հանդիմ կարեւորագոյն նիւթեր կը պարունակէ: Անոր իւրաքանչիւր խօսքը անվուրդական ճշմարտութիւն մըն է: Քրիստոս իւր վարդապետութեանց ամենէն կարեւոր կէտերը այս աղօթքին մէջ համառօտակի յիշած է: Ուրիշ խօսքով մեր առօրեայ կեանքին համար պէտք եղած բարձրագոյն և օգնական կիրարկելի սկզբունքները մարդարտնման շարուած են անոր մէջ: Երկու հազար տարիներէ ի վեր գործածուող այս աղօթքի ուժգնութիւնը եւ թարմութիւնը դարէ դար աւելցած և պահուած է:

Տեղումական Աղօթքը Տիեզերական և Քրիստոնեայի ինչպէս նաեւ Հեթանոսի և Հրեայի համար պարզ և հասկնալի է: Զանազան ազգերու, այլազան կրօնք-

ներու, կամ ազանդներուն պատկանողներ կրնան համարձակութեամբ մատուցանել զայն: Հարաւոր կամ ազատի, զործատէրի կամ գործաւորի, ուսուցիչի կամ ուսանողի, եկեղեցականի կամ աշխարհականի հոգեւոր մը խիթարութիւնը անոր մէջն է: Սակայն այս աղօթքը մեկնաբար կրկնելու համար չի. ցաւալի է որ մեզմէ շատեր այդպէս կ'ընենք, ահա այն ատեն իր հոգին կը կորստի և աղօթք ըլլալէ կը դադրի: Մենք պէտք է այս աղօթքի իմաստին զօրութեամբ աղօթենք. և մեր աղօթքներու նիւթերն աւելաւորապէս կ'ստեղծեն Տէրունական Աղօթքին:

Այս աղօթքին համար, Տիրտուղիանոս Եկեղեցւոյ կարկառուն հայրապետներէն մին, ըսած է. «Տէրունական աղօթքը բոլոր Աւետարանին ամփոփումն է»: Ուրեմն ուսումնասիրենք զայն,

հատուածները զատ զատ պարզաբանելով:

Տէրունական Ազօթքը յառաջաբանէ և վերջաբանէ զատ կը բաժնուի երկու գլխաւոր մասերու: Առաջին մասը, որ կը պարունակէ երեք խնդրուածք, Աստուծոյ պատկանեալ մասնաւոր օրհնութիւններ են,

Գահար ազօթքի օսկեղէն մօտքը եղող սա գոյգ մը բառերէն, «Հայր մեր» էն, գութ, գորով, սէր և հոգածութիւն կը ծորի: Մեք Փրկիչը այս տիպար ազօթքի յառաջաբանով կը սորվեցնէ թէ Արարիչը Ամէնուն Հայրն է և մարդկութիւնը՝ Անոր օրդիքը: Այս գոյգ մը բառերը բովանդակ մարդերը Արարիչ Աստուծոյ հայրական խնամքին յանձնելով մէկտեղ՝ զանոնք իրարու կը մօտեցնէ, և անոնց մէջ հղբայրութեան ու որդիութեան հոգին կ'արծարծէ:

«Աստուած ծրագրած է որ մարդկութիւնը իր բաւոր խաւերուն մէջ վերջապէս զիտակցի իր որդիութեան՝ և իր բնածին ազնուականութիւնն արժեցնէ՝ իրազօրծելով իր մէջ թագնուած աստուածային կարեւորութիւնը»: Հայր Աստուածը, մեզի համար ունի վեհ նշանաւոր մը, բարձր ծրագիր մը՝ զոր կ'ուզէ իրագործել մեր բոլորանուէր գործակցութեամբ: Ասիկայ աննման լիազօրութիւն մը և փառաւոր առանձնաշնորհում մըն է, մեզի պարզեւուած: Հօրը պատկերը կրող բովանդակ մարդկութեան հսկայ զանգուածին մէջ իւրաքանչիւր անհատի անձնաւորութեան մեծութիւնը և նկատագրի ազնուականութիւնը կը կայանայ Յիսուս Քրիստոսի հոգիովը, Աստուծոյ հետ նոյնանալով և իրեն գործակից ըլլալով, մարդոց գործնականապէս ծառայելուն մէջ: «Հայր մեր» ըսել կարենալու արօժիթին էն ապառիւսեան աւելի մեծը ու աւելի բարձր կարելի չէ երեւակայել մարդուն համար:

Ուրիմն Տէրունական Ազօթքը մատուցանելու չսկսած պէտք է, նախ զԱստուած Հայր նկատել, ճանչնալ և զգալ Անոր Հայրութիւնը և ապա վըստահօրէն դիմել Անոր:

Ա. Մաս: Աստուծոյ պատկանեալ երեք ընդհանուր օրհնութիւններ:

1. Բու անունդ սուրբ ըլլայ: Ընթերցող, հոգեւոր երգարանէն 7օրդ երգը հիմա երգէ կամ կարդա: Աստուած արդէն սուրբ և կատարեալ է: Երոզքները և Քերթնքները այսպէս ազօթեցին և երգեցին, Յիսուս այսպէս ըսաւ: Սակայն մենք այս առաջին խնդրուածին համեմատ, մեք առօրեայ կեանքերով Անոր սրբութիւնը մեր կեանքերուն վրայ փայլեցնելու ենք:

2. Բու թագաւորութիւնդ գայ: Նախընթաց խնդրուածին շարունակութիւնն է: Յիսուս, իր Հօրը թագաւորութիւնը հաստատելու և մարդիկը փրկելով յիշեալ թագաւորութեան հպատակներ ընելու նպատակաւ աշխարհ եկաւ: Աստուծոյ թագաւորութիւնը երկինքէն վար պիտի չգայ, այլ Քրիստոսի շնորհիւ՝ գործնականապէս երկրի վրայ մարդոց մէջ հաստատուած է և հաւատացեալներու միջոցաւ պիտի տարածուի: Աստուծոյ թագաւորութիւնը մեր մէջն է: Ամենաազգաստ քրիստոնեային նուիրուած հոգին և առատածեռնութիւնը՝ Աստուծոյ թագաւորութեան լայնօրէն տարածման համար տրամադրւած լաւագոյն հարստութիւն և եզակեան լծակն ու ազդակն է: Ազօթիւ և գործել զուգընթաց կը յառաջանան: Մեզ, առօրեայ կեանքի մէջ, գործի կը մղէ այս խնդրուածը: Սիրելի ընթերցող, քաւ միջոցովդ ո՞րչափ կը տարածուի Անոր թագաւորութիւնը:

Յ. Բու կամքդ ըլլայ: Ջերմագին տենջանք մը կայ որ կը յայտնուի հոս: Առ Աստուած, մարդկային սրտին մէջ գտնուած երկնային օրհնայն արդիւնքն է

որ կը բղխի դուրս Արարիչը մեծարելու նպատակաւ: Կատարեալ հնազանդութեան հոգին կը յայտնուի սրտանց որպէսզի Հայր Աստուածը փառաւորութիւն Այս խնդրուածը կը պահանջէ պաշտօնայ կամք, որ ի գին ամէն զոհողութեանց Աստուծոյ կամքը յտուաջ տանելու կը ձգտի, կը գործէ և ի հարկին՝ կը զոհուի:

Մեր Տէրը, Գողգոթայի դափնեպսակը եղող տիեզերական յաղթանակը տարած էր այն ատեն երբ Գեթսեմանիի մէջ արիւն քրտինք թափելու ժամանակ

չսաւ. «Եղիցին կամք քոս: Յիսուս այս խօսքին ետեւ անսասան մնալով Գողգոթայի բլրին վրայ խաչը բարձրացաւ, արիւն թափեց, զոհուեցաւ որպէսզի կատարեալ ըլլայ իր ծառայութիւնը և ապահովեց մարդոց փրկութիւնը:

Եթէ Աստուծոյ կամքը երկրի վրայ լիովին գործադրուի, իր զաւակներու միջոցաւ երկիր երկինք կ'ըլլայ, Անոր թագաւորութիւնը կը տարածուի և հզօր Անունը կը փառաւորուի:

Կ. ՖԱՐԱՃԵԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ՆԱՅԷ ԵՒ ՈՉ՝ ՄՇՈՒՇԻՆ

Ճորճ Միւլլըրը Ամերիկա տանող շոգենավին նաւապետը, որ շատ բարեպաշտ հաւատացեալ մըն էր, հետեւեալ պատմութիւնը կը պատմէ:—

Նիւֆաունտլենտի եզերքը չհասած դէպք մը պատահեցաւ, որ հոգեւոր կեանքս հիմնական փոփոխութեան ենթարկեց: Մշուշի մը պատճառաւ ես ստիպուած էի 24 ժամ անընդհատ կամրջակի վրայ կենտլ, և տեղէս չչարժիլ: Ճորճ Միւլլըր քովս գալով ըսաւ. «Նաւապետ, եկայ ձեզի ըսելու թէ Շաբաթ կէսօրէ ետքը ես պէտք է Գուէպէք գտնուիմ»: Ահարկի չէ՞ պատասխանելի: «Շատ լաւ, եթէ ձեր նաւը զիս չի կրնար հասցնել, Աստուած ուրիշ միջոց մը պիտի գտնէ: Յիսուն եօթը տարիներէ ի վեր իմ ժամադրութիւններէս ոչ մէկը ձախող դացեր է: Եկուր քեզի հետ վարը սենեակը իջնանք և աղօթենք», ըսաւ Միւլլըր:

Այս Աստուծոյ մարդուն նայելով ինքնիրենս ըսի թէ արդեօք այս մարդը յիմարանոցէն կուգայ, մինչեւ հիմայ այս պիտի բան մը չլսեցինք. և իրեն

դառնալով ըսի. «Մը. Միւլլըր, գիտէ՞ք թէ այս մշուշը որչափ թանձր է: Եւ նա պատասխանեց. «Ո՛չ, չեմ գիտեր, իմ աչքս մշուշի թանձրութեան վրայ չէ այլ Աստուծոյ վրայ օր իմ կեանքիս ամէն պարագային վրայ կ'իջնէ»:

Ետեւ դրաւ և շատ պարզ աղօթք մ'ըրաւ: Եւ երբ իրմէ ետքը ես աղօթելու կ'ապրէի, ձեռքը ուսիս վրայ զընելով ըսաւ. «Մի՛ աղօթե՛ր, քանզի նախ չես հաւատար որ Ան պիտի պատասխանէ, և երկրորդ՝ ԿՐ. ՀՍԻԱՏԱՄ ԹԷ ԱՆ ԱՐԴԷՆ ՊԱՏԱՄԱՆԱՄ Է, և քու աղօթքիդ պէտք չկայ: «Եւ մինչ ես անոր երեսը կը նայէի, ան շարունակեց: «Տէր նաւապետ, ես իմ Տէրս 57 տարիներէ ի վեր կը ճանչնամ: Այս ժամանակի միջոցին հղած չէ օր մը որ իմ թագաւորիս ունկնդրութեան չընդունուիմ: Ոտքի՛ ել նաւապետ, զԹԵՐ բաց և ահա մշուշը փարատած պիտի գտնես: Ոտքի ելայ և նայեցայ. իրապէս մշուշը անհետացած էր: Շաբաթ կէսօրէ ետքը Ճորճ Միւլլըր Գուէպէք հասաւ, և իր որոշած ժաման իր գործին գլուխն էր:

ՀՆՈՐՀԱՅԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՈԽԷ ԴԵՊՔԵՐԸ

«Եւ Յիսուս իր աշխեր վեր վերցուցած ըսաւ. Հայր, շնորհակալ եմ քեզի որ ինձի յանցիր»
Յովհ. 11. 41.

Ասիկա շատ զարմանալի և անբնական շարք մըն է։ Շնորհակալութիւն կը յայտնուի մինչ Ղազարոս տոկաւին գիրեզման կը գտնուի և յարութիւնը չէ պատահած։ Մեզի համար յարմար շարքը սա է. նախ մեծ գործը պէտք է կատարուի, Ղազարոս պէտք է յարութիւն առնէ և ապա պէտք է շնորհակալութիւն յայտնուի։ Սակայն Յիսուս ըստանալիք օրհնութեան համար կանխիկ շնորհակալութիւն կը մատուցանէ։ Վըստան ըլլալով որ օրհնութիւնը գալու վրայ է, ան չհասած շնորհակալութեամբ կը լեցուի։ Կռիւը չչահուած յաղթանակի հրգը կ'երգուի։ Երկրագործը ցանելու ատեն կ'երգէ այն երգը զոր հունձքը ամբարելէ հողը պիտի երգէր։ Հրաշքը չկատարուած փառք կուտայ։

Ո՞ր խաչակիրը իր միտքը կը բերէ յաղթութեան սաղմոս երգել մինչ պատերազմի համար նոր ճամբայ կ'ելլեն։ Ո՞ր լսուած է տակաւին չստացուած պատասխանին համար գոհարանութեան երգը։ Մեր Տէրոջ հետեւած այս շարքին մէջ տարօրինակ, անբնական կամ ստիպեալ բան մը չկայ։ Քանզի հրաշքը կատարուի, իսկ հոգեւոր ոյժն ալ միշտ մեր հաւատքին համապատասխան կ'ըլլայ։ Տ. ՃԱՌԻԷԹ

Աղօթքներու մէջ մեր մատուցած շնորհակալութիւններուն չափ ոչ մէկ բան զԱստուած գոհ կ'ընէ, և գոհարանութեան չափ ոչ մէկ բան աղօթողը կ'օրհնէ։ Զինաստանի մէջ ես անգամ մը այս կերպով մեծ օրհնութիւն մը ստացայ։ Մեր ընտանիքէն թխուր լուր առած էի, թանձր խաւար մը հոգիս պատած էր։ Աղօթեցի, բայց խաւարը չփարատեցաւ։ Ինքզինքս ստիպեցի հանդուրժելու։ Բայց մօթը աւելի խորունկցաւ։ Այդ պահուան ներքին միսին արական կեդրոնը գացի և պատին վրայ սա բառերը կարդացի։ «Փորձէ՛ շնորհակալ ըլլալ»։ Այդպէս ալ ըրի, վայրկեանի մը մէջ ամէն շաք անհետացաւ անգամ մ'ալ չտեսնուելու պայմանով։ Այո, սաղմոսերգուին շիտակ կը խօսի երբ կ'ըսէ թէ Աստուծոյ փառք տալ լաւ բան մըն է։ «Շնորհակալութիւնը զէպքերը կը փոխէ»։

Հ. ՅՐՈՍԹ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՍ

Այնթապ ծնած եմ 1900 ին, և մեծացած եմ բողոքական ընտանիքի մը մէջ։ Մանկութենէս իվիր Կ. Դպրոց և եկեղեցի յաճախած եմ և բարոյական կեանք մը ապրած եմ։ Ասկէ 12 տարիներ առաջ իմ մէջս դէպ ի հոգեւոր կեանք միտում մը սկսաւ ծայր տալ, բայց ապա խարութեան և վերստին ծնունդի մասին դադափար չունէի։ Կը խորհէի թէ ես հոգեւոր կեանքը պէտք է ապրիմ

անձնագոյութեամբ և ջանքով։ Եւ տեսայ որ արիկա ապրելիք կեանք մը չէ, անհամ գաղջ կեանք մըն է։ Ուստի դուն որ գաղջ ես, ու ոչ առաք և ոչ ալ աղ, քեզ բերնէս գաւառ փոխելու վրայ եմք։ (Յայտ. 3. 16)։ Զկարենալով տաք կեանք մ'ապրիլ որոշեցի պաղը ապրիլ և զանազան ընկերներու հետ սկսայ աւելի ու աւելի գէշ բաներու ետեւէ ըլլալ։ «Մի՛ խաբարիր, չար ըն-

կերակցութիւնները աղէկ բարքը կ'ապակենեն: (Ա. Կոր. 15. 23):

Մեր տունը հոգեոր եղբայրներ. քաղաքային խօսակցելու համար, քրոնց հետ միայն քաղաքավարութեան համար կը խօսակցէի և զանոնք կը մեծարէի, բայց անոնց խօքերուն երբեք կտրեութիւն չէի տաք: Սիրտս այնքան կարծրացած էր որ խրատուելու անկարող վիճակի մը հասած էր: «Այս ժողովուրդին սիրտը թանձրացուր, և ականջները ծանրացուր, ու անոր աչքերը դոցէ, օրպէսզի չըլլայ թէ աչքերովը տեսնէ, ու ականջներով լսէ, և սրտովը իմանայ, և դարձի գայ ու բըժշկուի»: (Ես. 6. 10):

Տարիներ անցան. ընկերներէս մէկը ապաշխարեցաւ, որուն միջոցաւ ես ալ 1926 Ապրիլ 15ին դարձի եկայ: Այն համարը որ ինծի ազգած էր և կեանքս փոխած էր սա է. «Եթէ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է անիկա մեր մեղքերուն թողութիւն տալու, և մեզ բոլոր անիրաւութիւնը սրբելու» (Ա. Յովհ. 1. 9): «Աստուած ողորմէ ինծի մեղաւորիս» (Ղուկ. 18. 13): Ան զիւս ընդունեց իր խոստումին համեմատ. «Ան որ ինծի կուգայ բնաւ դուրս պիտի չհանեմ» (Յովհ. 6. 37): Անոր զարմանալի շնորհքովը ես փրկուեցայ, վրայէս բեռ մը նետուեցաւ, և սիրտիս մէջ անբացատրելի ուրախութիւն մը սկսաւ: Հին մարդը փոխեց և զիս իրժով նոր արարած շինեց, Փառք Անոր անուան:

Ցաւով կը յիշեմ թէ հոգեւոր կեանքի սկսելէս բաւական ատեն ետքը սայթաքումներ և տկարութիւններ ունեցայ, և խաղաղութիւնս ալ կորսնցուցի: Բայց փառք Աստուծոյ լքեալ չէի: Այս դժուարութիւններս Փրկչիս տարի, որ զանոնք վերցուց և ինծի իմ ոչնչութիւնը սցուցուց: Այս փորձութիւններս ապտեղաւ եղան որ ես Անոր աւելի մօտ

երթամ, և սիրտս ալ կատարեալ խաղաղութիւն վերստանայ:

Այս վեց տարիներու միջոցին հիւանդութիւնս ամէն տարի աւելի սաստկացած է: Հիմա երբեք չեմ կրնար քալել, և տունը ժամանակս կ'անցնեմ Ա. Գիրքի, հոգեւոր գիրքերու և թերթերու ընթերցանութեամբ: Մարդկօրէն նայելով երիտասարդի մը համար անհանդուրժելի վիճակ մըն է այս. բայց փառք Տէրոջս, որ զիս կը մխիթարէ: Ամէն բանի մէջ նպատակ մ'ունի Ան, որ կ'ըսէ. «Ես իմ ամէն սիրածս կը յանդիմանեմ ու կը խրատեմ» ուստի նախանձաւոր եղիր ու ապաշխարէ:» (Յայտ. 3. 19):

Բոլոր փափագս կորուստի վտանգին մէջ գտնուող մեր երիտասարդներուն ալ փրկութիւնն է, քրոն համար բոլոր քրիստոնեաներուն աղօթքին կը կարօտինք: Քանզի մեր Փրկիչը բոլոր հաւատքով լի աղօթքներուն պատասխան կուտայ: «Աղօթքը քրքիրաբար համար, որպէսզի բժշկուիք. արդարեւ շերմեանդ աղօթքը շատ ազդեցութիւն ունի» (Յակ. 5. 16): Մօրս ջերմ աղօթքներն էին որ Տէրոջմէ պատասխանուեցան:

Դուն բարեկամ, որ վկայութիւնս կը կարգաւ, եթէ աակաւին դարձի եկած չես եկուր խոնարհէ Տէրոջ առջեւ, և մեղքերդ Անոր խոստովանէ, քանզի «Որդին մարդոյ եկաւ որ կորսուածը փնտռէ և փրկէ»: (Ղուկ. 19. 10): Տէրը չ'ուշաքներ իր խոստումները, ինչպէս ոմանք ուշացած կը սեպեն, հապամեկի երկայնամիտ կ'ըլլայ: Վասնզի չ'ուշեր որ մէկը կորսուի, հապա ամէնը ապաշխարանքի գայ: (Բ. Պետ. 3. 9): Արդ՝ մեր Տէրոջ ժառանգէն չգրկուինք մինչ Ան այսքան շատ խոստումներ ունի մեզի: Յաւիտեանս փառք Անոր անուան: Ամէն:

Հայկա

ԷՅՐԱՅԻՄ ԱՐՈՇԵԱՆ

ՄԱՐԴՈՒՆ ԱՐԺԷՔԸ

Արարածներու մէջ պարզէն դէպի բարձր զարմանալի աստիճանական զարգացում մը յայտնի է: Առաջին տեղեւորածները պարզ են, վերջինները՝ բարդ: Այս աստիճանական զարգացումը շատ լաւ կերպով կը տեսնուի մարդուն մէջ, արարածներու վերջնական դոյնը ըլլալուն համար: Շատ բարդ արարած մըն է և տարբեր մասերէ կազմուած է մարդս, որ ունի մարմին, կեանք, իմացականութիւն և հոգի: Ասոնցմէ իրաքանչիւրը տարբեր արժէք մը կուտայ մարդուն:

1. Մարդուն արժէքը իբր նիւթ:

Դիտուենք կ'ըսեն թէ մարդկային մարմինը 96 սէնթ (125 զրշ. սուրի) կը արժէ: Ան կը պարունակէ 6-7 կտոր օճառ շինելու բաւական ճարպ, երկու գամ շինելու բաւական երկաթ, տուփ մը լուցկի շինելու չափ ծծումբ և լուսածին (փոսփոր), սկահակ մը շաքար, սկահակ մը աղ և հաւնոց մը ծեփելու բաւական կիր: Այո, շուկայի մէջ այս բոլորին գինը 98 սէնթ է: Բայց բուն մարդը այս չէ, մարմինը մարդուն վանդակը, բնակավայրն է, արուն մէջ կեանք մը կայ, իմացականութիւն մը կայ, հոգի մը կայ: Ասոնց արժէքը շատ մեծ է:

2. Մարդուն արժէքը իբր կեանք ունեցող գոյութիւն մը:

Ինչպէս որ ամբարձրը հագուստէն աւելի է՝ կեանքն ալ նիւթէն աւելի արժէքաւոր է: Մարդ տարբեր արժէքներ ունի իբր գործաւոր մը, իբր զինուոր մը, իբր ընտանիքի տէր մը: Գործարանատէր մը առողջակազմ երիտաւարդի մը կ'ըսէ. «Տարեկան 1000 տուար կը վճարեմ քեզի եթէ ինծի համար աշխատիս: Իբր աւժով բանաւոր մը քու վարձքդ այս է:» Ձեռական աշ-

խատանք ընող և մարմնական ուժը պառոզ մէկը արժանի է այս վարձքին: Կառավարութիւնը մարդը իբր հասարակ զինուոր նկատի կ'առնէ և անոր փոխարժէքը կ'որոշէ: Իբր կառավարութիւնը պաշտպանող զինուոր մը կը որոշուի անոր արժէքը, որ կը հաւասարի 1000-5000 տուարի: Ընկերութիւնը մարդը իբր ընտանիքի տէր մէկը նկատի կ'առնէ, և երբ կ'սպաննուի կամ արկածի կ'ենթարկուի անոր արժէքը իբր 5000-25000 տուար կը գնահատէ: Այս արժէքները ամէն մարդու համար և ամէն երկրի մէջ նոյնը չեն: Եթէ գործաւորը՝ ճարտար արհեստական մը, զինուորը՝ սպայ մը, ընտանիքի տէրը՝ կարեւոր անձ մըն է, մարդուն արժէքն ալ անոր համեմատ կը բարձրանայ:

3. Մարդուն արժէքը իբր իմացականութեան տէր գործաւոր մը:

Մտային աշխատանք կատարող մէկը ձեռական աշխատանք կատարողէն աւելի վարձք կը պահանջէ: Օրինակի համար իբր բժիշկ, փաստաբան, ճարտարագէտ, արուեստագէտ, քարոզիչ, գրող կամ իբր վարիչ՝ աշխատաւոր մը մեծ արժէք ունի: Որովհետեւ այս աստիճանին հասնելու համար ան շատ ժամանակ և զբաւ վատնած է, որուն փոխարէնը ստանալու իրաւունք ունի: Այս տեսակ ծառայութեանը նպատակը թէ և դրամ չահիլ չէ, բայց «գործաւորը իր վարձքը առնելու իրաւունք ունի»: Ամերիկայի մէջ այնպիսի ընկերութիւններ կան, որոնք իրենց վաճառքներուն համար Ամերիկայի նախագահին տըրուածէն աւելի, 100-500 հազար տուար, թոշակ կը վճարեն: Այնպէս որ Ամերիկայի նախագահը ըլլալ դժամական է աւելի պատուի խնդիր է: Շատ զբաւ չահիլ փափագողները ուրիշ ասպարէզ-

ներ կը մտնեն :

4. Մարդուն արժէքը իբր հնարիչ :

Աշխարհն ու քաղաքակրթութիւնը շատ բան կը պարտին այս տեսակ հանճարներու: Ասոնք մարդկութեան բարեբարներն են, որոնց շնորհիւ աշխարհս այսօր շատ յառաջդիմած և շատ փոխուած է: Միջոցը կարճացած է, գիշերը ցերեկի փոխուած է, բնական ոյժերը նուաճուած են և ամէն մարդի մէջ հրաշքներ տեղի ունեցած են: Ուսթի շոգեշարժ մեքենան, Սթիվընսընի շոգեկառքը, Ֆուլթընի շոգենաւակը, Ուիթնի բամպակի մեքենան, Մորի հեռագիրը, Հալի կարի մեքենան, էտիսընի ելեկտրական լամբարը, Մարգունի անթել հեռագիրը, Բայթ եղբայրներու սաւառնակը և այլն հրաշքներ կը գործեն: Զեմ գիտեր թէ աշխարհն ու քաղաքակրթութիւնը ինչպէ՞ս պիտի կրնան իրենց պարտքը ասոնց վճարել: Վերջին տարիներու վիճակագրութեան համեմատ Ամերիկայի փաթէնթի պաշտօնատունը մէկ տւ կէս միլիոնէ աւելի փաթէնթ տուած է, այսինքն մէկ տւ կէս միլիոն գործիքներ, մեքենաներ հնարուած են: Ասոնց բոլորն ալ մեծ գիւտեր չեն, բայց անոնց մէջ շատ կարեւորներ կան՝ զորոնք հնարող մտքին արժէքը զնահատել գիւրին գործ մը չէ, անոնց համար մէկ կամ 10 միլիոն տուար արժէք մը տալ քիչ է:

5. Մարդուն արժէքը իբր բարոյական առաջնորդ մը:

Մեծ են այն մարդիկ որ իրենց գիտական և արհեստական գիւտերովը մարդկութեան կը ծառայեն: Բայց աւելի մեծ են անոնք որ բարոյական և կրօնական մարդերու մէջ ժողովուրդներու կ'առաջնորդեն: Որովհետեւ այսպիսի մարդիկ ազգին բաղդը կ'որոշեն և զայն յաջողութենէ յաջողութիւն կ'առաջնորդեն: Ինչպէս որ «մարդ միայն հացով չ'ապրիր», միայն նիւ-

թական աշխարհիկ յաջողութեամբ ալ չի կրնար ապրիլ: Պէտք է անոր տալ բարոյական սկզբունքներ և հոգեւոր ճշմարտութիւններ, որոնք ազգային կեանքը աւելի կը կենդանացնեն և անոր աւելի հաստատութիւն և զօրութիւն կուտան: Համարապի՝ Քաղդէացիներու, Մովսէս՝ Եբրայեցիներու, Լուգուքկոս՝ Մարերու, Գրիգոր Լուսաւորիչ՝ Հայերու ազգային կեանքին մեծապէս ազդած են: Անոնց յիշատակը այս ազգերու համար շատ նուիրական է: Անոնց արժէքը անգնահատելի է և Անոնք իրենց պատկանեալ ազգին իբր հայրը և առաջնորդը կը նկատուին:

6. Մարդուն արժէքը իբր անմահ հոգի:

Ոմանք կը կասկածին մարդու մէջ անմահ հոգիի գոյութեան, որուն՝ սակայն նշանները յայտնի կը տեսնուին: Մարդ՝ անձնակաւն զիտակցութեան տէր արարած մըն է, որ օժտուած է անհուն ընդունակութիւնով և կարելիութեամբ, և մանաւանդ չարն աւ բարին, շիտակն ու սխալը իրարմէ զանազանելու յատկութեամբ: Անոնք հոգեւոր յատկութիւններ են, որ մարդը կը բարձրացնեն նիւթական և իմացական աշխարհէն բարոյական և հոգեւոր աշխարհի: Թէպէտ մարդ հրեկեան աւրարած մըն է, բայց վաղուան արարած մըն է: Ան անմահ հոգի մ'ունի որ յաւիտենապէս ապրելու համար սանգծուած է: Մահը մարդկային պատմութեան մէջ տեղի ունեցող պատահական դէպք մըն է և զարկ՝ հոգիի վրայ ազդելու ոյժէն: Վիզոր Զիւկօ անմահութեան մասին սապէս կ'ըսէ. «Ես հանգերձեալ կեանքը անձիս մէջ կըզգամ. գլխուս վրայ ձմեռ կայ, բայց սիրտիս մէջ յաւիտենական գարունը կը տիրէ: Շիրիմը անյատակ վիճմը չէ՝ այլ պողոտայ մըն է, որ վերջալոյսին կը գոցուի և արշալոյսին կը բացուի»:

Ի՛նչ հաճելի է այս յաւիտենական դարնան մէջ ապրիլ և անվախճան կեանքը վայելիլ: Ահա այս է հոգիին արտօնութիւնը:

Մարդկային մարմինը որչափ ալ հոգէ է և քիչ արժէք ունի, հոգին աստուածային է և շատ արժէք ունի: Ան՝ Աստուծոյ հոգին ունի, և Ամենակարողին շունչը՝ անոր կեանք կուտայ: Ան՝ «Հրեշտակներէն քիչ մը վար» դրուած է և «Փառքով և պատուով» պսակուած է: Շէյքսպիր սա բացատրութիւնը կը գործածէ մարդու մասին խօսելու ատեն: «Մարդ ի՛նչ հրաշալի ստեղծուած մըն է, բանականութեան մէջ ի՛նչ վեհ, կարողութեան մէջ ի՛նչ անսահման, ձեւերու և շարժումներու մէջ ի՛նչ նշանակալից և ազնիւ, գործունէութեան մէջ հրեշտականման, ըմբռնողութեան մէջ աստուածներու պէս է»: Ահա այս արարածն է որ անմահ հոգի մ'ունի: Եւ Աստուծոյ մտածումին, այցիւն և սէրին առարկան է: Աստուած այս մարդկութիւնը ազատելու համար իր Միածինը շնորհեց, և Քրիստոս զայն փրկելու համար իր կեանքը զոհեց: Թիսուսի ուշադրաւ խօսքերէն մէկը սա է. «Ի՞նչ

կը շահի մարդ մը եթէ բոլոր աշխարհը վաստկի և իր անձը կորսնցնէ, կամ իր անձին համար ի՛նչ ազատչէք պիտի տայ մարդ»:

Ուսանող մը անգամ մը բարձր նիշերով և պատուով ուսողական ճիւղէն ընթացաւորտ եղաւ: Անոր բարեկամներէն մէկը սա իմաստով նախաձեռնեց իրեն. «Երիտասարդ բարեկամս, հիմա դուն թուագիտական ուսումնարան մէջ բարձր նիշեր շահեցար. քեզ կը շնորհաւորեմ այս յաջողութեանդ համար: Քեզի կը ներկայացնեմ կարեւորագոյն մէկ հարցում մը. — Ի՞նչ կը շահի մարդ մը եթէ բոլոր աշխարհը կը վաստկի և իր անձը կը կորսնցնէ»: Երիտասարդը, ուսու աշխատիլ այս խնդիրը լուծելու և անոր շիտակ պատասխանը գտնելու և վերջապէս ինքզինքը Քրիստոսի յանձնեց: Հոգին իր Փրկիչը գտաւ, և իրական արժէքը ստացաւ: Մարդուն իրական արժէքը Աստուծոյ հետ իր յարաբերութեան մէջ և Քրիստոսով եղած փրկութեան մէջ է: Այս է յաւիտենական կեանքը, անվերջ կեանքը, արժէքաւոր կեանքը, աստուածային կեանքը:

Հ. Յ. ԱՇՃԵԱՆ

ԻՆՉՊԷՍ ԳՐԱԽԵՑԱՆ ՄԵՐ ՀՈԳԵԻՈՐ ԵՐԳԵՐԸ

1. — «Լոյս բարերար տիրոջ մէգին մէջէն, Դուն գիտաւ զիս» Հ. Ե. 202.

Թ. Ե. 199 «Եղիւնակ» (Rev. John Henry Newman)

Վեր. Ճան Հ. Նիւմէն, Անգլիկան եկեղեցւոյ կղերականներէն մին, և «Բարձր եկեղեցի» (High Church) կոչուող խմբակին պառլիսուն էր: Այս երգը Միջերկրականի վրայ ճամբորդած ատեն գրի առած է: Նա մարմնով շատ տկար, հիւանդ և հոգով ընկճած էր: Իր Մայր եկեղեցւոյն մէջ կրօնական

բուն վիճաբանութիւն մը տեղի կ'ունենար, այն եկեղեցին որուն ինք մի աչքառու առաջնորդն էր, նաև անոր շահերուն մի քան պաշտպանը: Այս միջոցին Ճան Նիւմէն երկու տէսակէտներու մէջ կը տարութեբեւէր: Նա իր անձնական հաստատեց կորսնցուցած չէր: Բայց իրեն համար մեծ հարց մըն էր թէ ինք Անգլիկան եկեղեցւոյ մէջ մնալու է, թէ Հռոմէական եկեղեցւոյ ծոցը վերադառնալու է: Վեր. Ճան Նիւմէն անկեղծութեամբ զինք առաջնորդող

լոյս մը կ'որոնէր, և ահա այս երգը այդ ուղղութեամբ իբր մի աղօթք Միջերկրականի վրայ առ Աստուած կ'ուղղէ.

Լոյս բարեբար տիրող մէզին մէջէն,

Դուն զիս ուղղէ.

Մութ է գիշերն, և ես հեռու՝ տունէն

Զիս հոն աւղղէ:

Իր այս աղօթքին իբր պատասխան նա մի քանի տարիներ յետոյ Անգլիկան Եկեղեցին ձգելով Հռօմէական եկեղեցւոյ ծոցը կը վերադառնայ և շատ չանցած այդ եկեղեցւոյն կարտինալներէն և ամենակարող զաւակներէն մին կ'ըլլայ: Ներկայիս կրօնական խնդիրներու մէջ լոյս և առաջնորդութիւն փնտռողներ այս երգը իբր մի աղօթք գործածելով, զայն օգտակար կը գրանեն:

«Հաւատքս Գեղ կը նայի»։ Հ. Ե. 203, Թ. Ե. 216:

Վեր. Բէյ Փալմըր գրէճէ մը գիւնոր շրջանաւարտ եղած, ու իր Աստուածաբանական դասընթացքին չսկըսած, հրիտաւարդ տղայ մըն էր: Թէ և նա մարմնով շատ տկար էր, սակայն իր օրապահիկը ձեռք ձգելու համար Նիւ Եորք պզտիկ դպրոցի մը մէջ դասաւանդելու կ'ստիպուի: Ահա ասանկ մի անցուկ վիճակի մէջ Վեր. Բ. Փալմըր այս երգը գրի կ'առնէ, քրտն մառին նա յետոյ ապաւնէ կ'ըսէ. «Նա երբեք այս երգի բառերը գրի առի չատ զգայուն վիճակ մ'ունէի, նոյն իսկ ամենավերջին ազդի բառերը արցունքնեքու մէջ վերջացուցի»:

Օր մը իր բարեկամներէն մին, Տր. Մէյսըն (Mason), Պոստոն իրեն կը հանդիպի և կը հարցնէ թէ, իր նոր հրատարակելու գաւթը երգարանին համար ունէ երգ մը ունի՞: Վեր. Փալմըր անմիջապէս իր գրպանի յուշատետրը հանելով այս երգին բառերը Տր. Մէյսընին կը յանձնէ: Տր. Մէյսըն տուն հա-

սածին պէս նոյն գիշեր այս երգին եղանակը կը յօրինէ: Մի քանի օրեր յետոյ Տր. Մէյսըն այս երգին հեղինակին հանդիպելով կ'ըսէ. «Վեր. Փալմըր, դուք շատ երկար տարիներ ապրելով կրնաք շատ բարի գործեր կատարել. սակայն ես կը խօրհիմ թէ ձեր անունը անմահ պիտի մնայ իբր հեղինակը այս գեղեցիկ երգին»:

Հաւատքս Գեղ կը նայի,

Ով Դաւն Գողգոթայի

Փրկիչ իմին»:

Քրտնիկ հիւանդութենէ մը սաստկապէս տառապող մանկամարդ աղջիկ մը այս երգին հեղինակին ուղղած նամակին մէջ հետեւեալը կը գրէ.

«Տարիներ առաջ առտու մը սովորականէն աւելի ուժասպառ արթնցայ: Յաւաստութեան սեւ ամպերը մատաղ հոգիս շրջապատեցին: Հարկաւ կրնաք երեւակայել թէ այսպիսի մի ժամանակ մարդս ինքզինք ուղտի տրտուռ կ'զգայ: Դաւն տրտունջներ հոգիս պաշարեցին: Սիրտս Աստուծոյ դէմ ըմբոստանալ և մտքիս մէջ ստօրին և մեղսալից խորհուրդներ ծնունդ առնել սկսան: Ի՞նչէ պատճառը այս ամենուն, ես ի՞նչ ընելու եմ: Աստուծոյ մտաքս առջև շարունակ հարցումներուն մի քանին: Անձրեւի կաթիլները պատուհանիս ապակիներուն զարնուելով հանած ձայնը կը լսէի: Շատ դիւրութեամբ կռահեցի թէ օրը շատ մոայլ պիտի ըլլայ. և ես խոցուած հագուելով խորիւրէն դաւն հառաչանք մը արձակելով աղաղակեցի. «Արդեօք այս օր զիս ուրախացնելու բան մը կրնամ գտնել: Անմիջապէս աչքիւս չորս կողմ պտտեցի սկսայ. բայց երբոր ցաւի օխիւ գտայ թէ սնեհակիս մէջ տունացիներն եմ, տրտուռ, տխուր եւ դաւնալով առաւապանաց բարձիս վրայ տուայտած զուլս հունգիցուցի»:

«Ասկայն այս տաղտկալի վիճակս

շատ չուեց: Յանկարծ դաշնակի մը
ձայնը առի: Գիտցայ թէ վարը ընտ-
տանեկան աղօթքը կը կատարուէր:
Վերը, առանձնասենեակիս մէջ, կար-
ծես ճիշդ անաբխ քով երգող անհատի
մը ձայնին պէս յստակ հետեւեալ առա-
ջին բառերը բացորոշ կերպով ականջիս
հասան:

Հաւատքս քեզ կը նայի,
Ով Գառն Գողգոթայի
Փրկիչ իմին:

Սիրելով այս երգին թէ եղանակը և
թէ թէ ալ բառերը լարուած ուշադրու-
թեամբ մտիկ ըրի:

Չայնիս մտիկ ըրէ՛,
Իմ մեղքս, Տէր, քաւէ,
Ըլլամ ես յայսմ հետէ
Միայն քուկին:

Անմիջապէս խաղաղութիւն մը հա-
մակ սիրտս լեցունց և ես աւրախանալու
համար բան մը գտայ: Այլևս աչքերս
ուրիշ բաներէն զարձուցած ես ալ եր-

գեցի:

Հաւատքս քեզ կը նայի.
Ով Գառն Գողգոթայի
Փրկիչ իմին:

Բաւական երկար մի ժամանակ, քո-
րեկ ու գիշեր նոյն երգը անդադար
կրկնել սկսայ, նամանաւանդ հետեւեալ
համարը:

Այս մօւթ ճամբուս վախճան
Մինչեւ աչքերս տեսնան՝
Յաւարըս լոյս ըրէ,
Աչքիս արցունքն սրբէ
Եւ մի՛ թողուր քեզմէ
Չատուի հոգիս:

Այս համարին բառերը իմ կեանքիս
մի մանրանկարը կը պապկերայնեն:
Սակայն ներկայիս շատ ուրախ եմ Բրիտ-
տոսով և կը հաւատամ թէ նա իր խոս-
տումը մինչեւ վերջը պիտի պահէ:

Թրիփոյի

Ե. Տ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

ՅՈՒՇԵՐ

1901 ին Ատանայի մէջ ջարդի սկսած
օրուան առաւօտունը բոլոր աշակերտու-
հիւնորու նիւն ես ալ դպրոց վազեցի՝
յաջորդ օրուան հանգէսին պատրաս-
տութեան համար: Դպրոցը կանոնա-
ւոր կերպով սկսաւ: և քիչ վերջը բո-
լորս ալ բակը իջանք հանգէսի պատ-
րաստութեամբ զբաղելու: Բիչ մը շա-
րունակեցինք: յանկարծ հրազէնի ձայ-
ներ լսուեցան և մենք անմիջապէս սը-
րահը մտանք: Դուռերը և պատու-
հանները գոցուեցան, զէնքի ձայները
շատցան: Այս վիճակը 3-4 օր տեւեց,
և վերջապէս ձայները դադրեցան: Բո-
լորս ալ սարսափի մէջ կուլայինք: Մի
քանի օրեր անցաւ և քաղաքը քիչ մը
խնդաղեցաւ: վերապրող ծնողները

դպրոց գալով իրենց զաւակները տուն
տարին: Իսկ ես ականդէտ շուր տեղ
կ'ապաստէի եղբորս գալուստին: Կըյաւ-
սահատէի և կը թողմէի: Վերջապէս
ուսօրէնուհին ինծի ըսաւ թէ ինք հիմա
եկեղեցի պիտի երթայ և պիտի հասկը-
նայ թէ մեզմէ որո՞նք ողջ մնացեր են:
Բիչ վերջը վերադարձաւ և լալով պատ-
մեց թէ հայրս և եղբայրներս միւր տուն
մէջ ոպանուած են, միւր տունը, եղ-
բորս խանութը հրդեհուած և մոխի-
րի վերածուած են: Երկու ամուսնաց-
եալ քոյրերս և մէկ ամուսնացեալ եղ-
բայրս միայն իրենց անձերը կրցած են
ազատել:

Այս դառն և կարկամեցեցիչ վիշ-
տով կ'ողբայի երբ երկրորդ ջարդը սկը-

սաւ: Այս անգամ Միս Ուէպ Ամերիկեան հիւպատոսի հետ տեսակցելով միջոցը գտաւ դպրոցին մէջ մնացած վարժուհիներն աւաղկեքսութիւնը Մերսիսին փոխադրել, և մենք գիշերը կայարան գացինք և առտուն կառախսեմքով Մերսիսին մեկնեցանք: Հոն քանի մը շաբաթներ մնալէ ետքը խուճրկերով ետ Ատանա փոխադրուեցանք, և մեզմէ տմանք իբր սպասուհի գործելով, ուրիշներ ձեռագործ բանելով իրենց ապրուստը կը ճարէին, իսկ տմանք ալ իրենց վերապրող պարագաներուն քովը զրկուեցան:

Ատանայի ժողովուրդին մէկ մեծ մասը քաղաքէն դուրս վրաններու տակ և նարնջենիի պարտէզի մը մէջ ծառերու տակ կը պաշտպանուէին կառավարութեան կողմէ: Տնօրէնուհին զիս քովը կանչելով ըսաւ թէ զիս իմ մեծ քրոջ քովը նարնջենիի պարտէզը պիտի տանի: Այս առաջարկը շատ ծանր ճնշեց վերաւոր սիրտիս վրայ, չիցիւ թէ ես ալ իմիններու հետ միասին մեռնէի, ըսի և ակապ գառն արցունքներ թափել:

Եաջորդ օրը տնօրէնուհիս զիս կառքի մը մէջ գրաւ, և իմ քովս նստելով զիս քաղաքէն դուրս նարնջենիներու պարտէզը առաջնորդեց. առատ արցունքները զիս ուժած պառ ըրած էին. կատարելապէս թռչած էի: Վերջապէս հասանք պարտէզը, որ աղեխարշ տեսարան մը կը պարզէր: Վար իջայ և քրոջս վիզը փաթթուելով երկար տուն լացինք: Ապա քիչ մը նստելէ և խաղաղելէ ետքը սկսայ ծառերուն տակը պտուիլ: Ինչ որ տանձիկ վիճակ. ոմանք կիւտեղ, ոմանք հոգեաքցի մէջ, ուրիշներ արդէն մեռած: Ոմանք կատարելապէս առանձին և անօղակաւ, ոմանք քով միայն կամ խառնած տկար մարմիններ: Ասոնց իւրաքանչիւրին քովը ես լուռ և դառնօրէն լացի: Այս

անտանելի վիճակը, և քիչ վերջը իմ ալ այս վիճակին հասնելուս խօրհուրդը հոգիս կը ճմլէին և կորովազուրկ կ'ընէին զիս:

Գիշեր եղաւ. ո՛չ բնական կայ և ո՛չ անկողին. ոչ մէկը չուէի: Եղանակը տաք ըլլալուն համար, սակայն, ասոնց պակասութիւնը այնչափ ալ ըզգալի չէր ըլլար: Տնօրէնուհիին տըւած մէկ պարանիայով մինչեւ առաւօտ ի զուր քնանալու աշխատեցայ: Վերջապէս լոյսը ծածկեց: Երեկուան զկպքերէն և վիշտերէն ետքը ինքզինքս շատ տկարացած կ'զգայի: Մէկէն յիշեցի թէ տնօրէնուհին իմ թաշկինակիս մէջ դրամ մը ծրարած էր, բացի և տեսայ որ երկու զրուշնոց մը կար, որով մի քանի առաւօտներու համար կաթ առի:

Մի քանի օր ետքը ես ալ հիւանդացայ քանզի պարտէզը ամէն տեսակ աղտոտութեամբ և հիւանդութեամբ լի էր: Մեռնիլ փափազեցայ այս վիճակէն ազատելու համար: Օր մը բաւական հանդիսս էի, բայց շուրջս գտնուող ամէն տեսակ մարդերու հայհոյանքները և խժառուր խօսքերը զիս շատ կը նեղէին: Գրոջս ըսի թէ ես հոս չեմ կրնար ապրիլ. և մինչ կը խօսակցէինք թէ ես ո՛ւր կրնամ երթալ կամ ի՛նչ կրնամ ընել, Տր. եւ Միսիս Չէյմսը զիս միտքս ինկան: Խօրհեցայ թէ արդեօք անոնք ինծի ճար մը կը գրտնե՞ն՝ եթէ անտանելի վիճակս իրենց պարզիմ. և որոշեցի երթալ: Եւ քըրոջս դառնալով ըսի. «Եթէ չեմ վերադառնար զիս մի՛ փնտռէք, Տր. Չէյմսը իմ տունը կ'երթամ»: Եւ երբ կը մեկնէի քոյրս ըսաւ. «Խիստ թէ քիչի համար տեղ մը կարհնային գտնել, ինծմէ շատ աւելի քու մասիդ կը մտադրուիմ»: Եւ Տր. Չէյմսը իմ տունը հասայ: Հագուստս չեմ գիտեր ե՞րբ, թերեւ ասկէ մէկ երկու ամիս առաջ տունէն ելած պահուս հագած էի: Այն-

պէս որ տուէն ներս մտնելու չէի համարձակեր: Ստիպուած մտայ, կամաց կամաց և զգուշութեամբ սանդուխէն սկսայ վեր ելլել, հրա կէսը հասայ Տր. Զէյմպլըրս գլուխս տեսաւ և անուշով կանչեց զիս: Շատ ամէնալուով վեր ելայ:

Տր. Զէյմպլըրս մեծ կարեկցութեամբ ինծի հարցուց մեր ներկայ վիճակին մասին, աւտոստեղէնի կանոնաւոր կերպով բաշխուելուն և վերջապէս իմ անձնական վիճակիս մասին: Ուշագրութեամբ մտիկ ըրին. կերակուր բերին և ճաշեցի: Վերջապէս Միսիս Զէյմպլըրս անուշ կերպով ինծի ըսաւ. «Սրբուհի, չեմ ուզեր որ տեղդ ետ երթաս, բայց արդեօք քայրդ քեզ կը փնտռէ»: «Ո՛ր, տիկին, զիս չի փնտռեր, ես իրեն արդէն ըսած եմ հոս գալս», ըսի: «Ուրեմն, հոս կեցիր», յարեց Տիկ. Զէյմպլըրս, և ես յոյս առի, և տխրոտ հանգստացաւ: Երբ իրիկուն եղաւ, Տիկ. Զէյմպլըրս ինձի համար տեսնակ մը պատրաստեց, գեղեցիկ անկողինով, ճերմակ սաւաննեղով, փետուրէ բարձով: «Սրբուհի, դուն հոս ննջէ», ըսաւ ինծի դառնալով: Անկողին մտնելէս ետքը նորէն քովս եկաւ և վիզս փաթթուելով ինծի համար աղօթեց, և երեսո համբուրեց և «գիշեր բարի» ըսելով բաժնուեցաւ:

Երկար ատեն չկրցայ քնանալ: Կը խորհէի թէ այս բոլոր անցուցածս իբրեւանութիւն էին թէ երազ, և եթէ իբրեւանութիւն են այս ի՛նչ տէր է, ի՛նչ կարեկցութիւն է: Առաւօտուն արթնեցայ. Տիկ. Զէյմպլըրս նորէն քովս եկաւ և հարցուց. «հանգիստ կըցա՞ր քնանալ»: Ի՛նչ վերջը ինծի նախաճաշ բերաւ:

Չորս հինգ օր այսպէս հոս հանգիստ ապրեցայ: Այս միջոցին Տիկ. Զէյմպլըրս, իմ ապագայիս մասին կարգադրութիւններ ընելու համար դպրոց գտած և պէտք եղած անձերու հետ տես-

նելած է, և իմ ծախքիս համար ինքը պատասխանատու եղած է: Եւ երբ քովս եկաւ ինծի ըսաւ թէ իր ըրած կարգադրութեան համեմատ ես նորէն դպրոց պիտի երթամ և հոն պիտի մընամ: Մեծ երախտագիտութիւնս յայտնեցի և նորէն դպրոց մտայ:

Այս գլխաւոր Ամերիկացի կինը իմ մասին Ամերիկա՝ զուէճի մէջ իր ուսումը շարունակող աղջիկին՝ սապէս գրած էր. «Բոլոր ուսուցչութեանդ պահուն քեզի շատ սիրելի աշակերտուհիդ, Սրբուհի, դժբախտ վիճակի մէջ է, ես և ինքը շատ կը փափագինք որ ինք Մարաշի Աղջկանց Գուէճը երթայ»: Այս աղջիկը արդէն ինծի հետ կը թղթակցէր իբր իմէկ սիրած սանուհին: Այս նամակը առածին պէս զայն իր ընկերուհիներուն կը կարգայ որոնք կարեկցութիւն զգալով իրենց մէջ հանգանակութիւն կը կատարեն և իմ գուէճական ծախքը կը հայթայթեն: Այս կերպով ետ կարող կ'ըլլամ 1909 ի Սեպտեմբերին Մարաշ ուղեւորիլ, ուր հոթը օր գրաստով ճամբորդելէ ետքը կը հասնիմ: Մարաշի դպրոցին մէջ երկու տարի շատ թանկագին ժամանակ կ'անցնեմ, և ապա Մէրսին կը հրաւիրուիմ ուսուցչութեան համար: Ամառուան արձակուողին Ատանա քրոջս քով կուգամ, որ սիրով զիս կ'ընդունի իր նոր շտկած գեղեցիկ տանը մէջ:

Ատանայի ջարդէն ետքը իմ կեանքս և երջանկութիւնս նախ իմ փրկիչս եղող Աստուծոյ, և ապա ազնուահոգի Տր. և Տիկ. Զէյմպլըրսի և իրենց դուստրը, Տիկ. Սիլիի, պարտական եմ: Կը մաղթեմ որ իրենց այս վերջին տարիներուն Աստուած զանեցիկ իր հովանիին տակ պահէ: Վստահ եմ որ անոնք երկինքը պիտի պսակուին իրենց այս և ասոր նման բարեգործութեանց համար:

(Տիկ.) ՍՐԲՈՒՀԻ ՊԵՐՊԵՐՍԸ

ՎԱՐՔԵՐ ՈՒ ԲԱՐՔԵՐ

Յաճախ ականատես կ'ըլլանք տգեղ և անճաշակ երևոյթներու որոնք թէ՛ մեր ազգային արժանապատուութիւնը կը վիրաւորեն և թէ՛ ալ օտարներու աննպաստ գաղափար մը կուտան մեր ազգային արժանիքներուն մասին:

Օրինակներով բացատրենք:

Հալէպի մէջ, նամանաւանդ վրանաքաղաքին, համատարած սովորութիւն դարձած է ազգային յեղափոխական երգերով և զինուորական նուագախումբին մասնակցութեամբ հարսը բերել փեսայի տունը: Առաջին անգամ պիտի առարկենք հարսանեկան թափօրի յեղափոխական և ազգային երգերով առաջնորդուելուն դէմ:

Ամէն երգ ստեղծուած է մասնաւոր պարագաներու հաւար. ատկէ դուրս այն բոլորովին կը կորսնցնէ իր արժէքը: Ազգային յեղափոխական երգ մը նման պայմաններու մէջ երգել նախատինք մըն է անոր հանդէպ և մեղանչում մը՝ երաժշտութեան տարրական կանոններուն դէմ, յատկանշելով ճաշակի մեծ պակաս:

Բայց մեր քննադատութիւնը պիտի նսեմանար եթէ այդ երգը երգուէր ներդաշնակութեամբ եւ ատաղ, անուշ ձայն ունեցողներու կողմէ: Բայց դժբախտաբար ճիշդ հակառակը տեղի կ'ունենայ, երգի աւերակութեան տեղ դժոխային աղմուկ մը, աններդաշնակութեան դուրս դուրծող մը կ'արտադրուի: Այդ քառասուն մէջէն երգուողին ճիշդ եղանակը փնտռել և գտնել բաւական ծանր աշխատանքի կարօտ է: Զինուորական նուագախումբը, բաղաձայններու ժխորը, պուշտողներու անբաղձալի ներկայութիւնը և մի քանի գինովներու տգեղ և անճաշակ պարը ակամայ յիշեցնել կուտան Ափրիկէի

ցեղերուն խրախճանքի օրերը...

Ահա այս կատակերգութիւնը մէկ փողոցէն միւսը, յաճախ մի քանի փողոցներ տեղացիներու և օտարներու հետաքրքիր, հեգնող և հրեմն ահամարհալից նայուածքներուն և ժպիտներուն տակ կը ներկայացուի յաճախ...

Այո, կրնանք ըսել ՏԳԵՂ ԲԱՐՔԵՐ ՈՒ ՎԱՐՔԵՐ:

Հայոց վրանաքաղաքը չորս կողմէ չրջապատուած է սրճարաններով, որոնք իրենց տգեղ և անբարոյացուցիչ մթնոլորտով, կը մրցին իրարու հետ: Աւելցնենք ասոր վրայ քաղաքի անթիւ ու անհամար սրճարանները ուր յաճախորդներուն մեծամասնութիւնը կազմուած է Հայ աշխատաւոր և արհեստաւոր երիտասարդներէ, նոր սերունդէ, որոնք թղթախաղի սեղաններուն առջեւ նստած, հայհոյանքներու և լըպիրշ խօսքերու տեղատարափին տակ իրենց բարոյական գերեզմանները կը փորեն: Եւ այս տխուր տեսարանները ակամայ խորհիլ կուտան ազգային մասին... Ծախով լեցուած, օդի բուրոզ կամ աւելի ճիշդը հոտող հակառակած մթնոլորտին մէջ անոնք կը կորսնցնեն իրենց այնքան արժէքաւոր առողջութիւնը:

Գետին թքնողները և ուշադրութիւն չգրաւելու համար կօշիկով կօխկրտողները կախճես երբէք զխաւկցութիւնը չունին թէ՛ նմանօրինակ արարք մը հաւասար է ոճքազործութեան, որովհետեւ այդ թուքին մէջ գտնուող միլիոնաւոր մահացու միջբրայները քանի՛ կեանքերու առողջութիւնը պիտի խանգարեն և քանին երո՛ւ մահուան պատճառ դիտի ըլլան...

Ամէն սրճարան օժտուած է ձայնա-

գիրով մը որ անշուշտ կը նուագէ Գան-
թօներ, Փեշրիկներ, Թագսիմներ, Շարգիներ
և Նորեղով թրքերէն անբարոյական
սիրերգներ և ահա զտարիւն հայեր
խոր երանութեան մը մէջ կ'ունենդրեն
անոնց։

Բարոյական փուլագումար մը առջեւ
կը գտնուինք շնորհիւ ազգային և կրօ-
նական առաջնորդներու ապիկարու-
թեան և ծուլութեան։ Որոնք ձեռքեր-
նին ծալած կը թողուն որ անփորձ նո-
րահաս սերունդը, զուրկ բարեխառն
ազդեցութիւններէ և յաճախ զուրկ հօր
մը կամ մօր մը գաւազնուրանքէն և հի-
շմանակութենէն կը վազեն անորակելի
հաճոյքներու ետեւէն։ Գազինօներ,
պարասրահներ, սրճարաններ և նոյն-
իակ հանրատուն իրենցմով լիցեալ են։
Կը վատնեն առատարար այն դրամները
որ հազար ու մէկ զրկանքներով իրենք
կամ իրենց խնդճ ծնողքները վատկած
են։ Վայելքներու հաւելէն վազելով և
օտար տարրերու հետ չփամփ գալով
կ'ուծանան թէ՛ իրենց ազգէն և թէ՛ ի-
րենց եկեղեցիէն։ Նոյնիակ շատեր կը
դառնան հայատեացիներ։

Օտարները մինչև հիմա զոված են
Հայը, իր ընտանեկան պատիւը դարեւ-
րու ընթացքին անաղարտ պահելուն
համար, հակառակ անբարոյացուցիչ
ազդակներու բարոյական բարձր մա-
կարդակի մը մէջ գտնուելուն համար։
Մինչև հիմա այդ գովասանքներուն
արժանի էինք, բայց հիմայ քննենք
զմեզ, գնենք մեր հոգիները, բարո-
յապէս շատ բան կորսնցուցած ենք։ Ա-
նոնք՝ որ ազգային խնդիրներու փոր-
ձապէտները կը ցուցնեն ինքզինքնին և
ամէն երեւոյթ ազգային տէսակէտէ կը
դիտեն և կը գնահատեն՝ պէտք է հա-
մոզուին թէ ազգապահպանման ամենա-
մեծ ազդակներէն մէկը բարոյական
բարձր կեանք ապրիլն է . . .

Սթափինք քիչ մը . . . Մ. ԱՐՍԼԱՆԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՆԻԿԱՆ Նահանգի ձու-
կի թխտարաններուն մէջ մէկէ աւելի գը-
լուխ ունեցող ձուկեր կարելի է նշմա-
րել։ Երկգլխանի ձուկեր գտնուել ան-
տօլօք բան մը չէ։ Հինգ գլուխ ունե-
ցող ձուկ մը գտնուած է։

ԼՈՆՏՈՆԻ մէջ Թրէյդըր անուն գիտ-
նական մը գործիք մը կատարելագոր-
ծած է, որ հրաբուխի մը ժայթքման
պատկերը կրնայ մէկ քսանհինգերորդ
երկվայրկեանի մէջ առնել։ Գիտնալու-
համար թէ պոթկուծի ժամանակ ինչ
կը պատահի, երկկողմ հայելի մը շին-
ուած է որ առանց օդի սննեակի մը մէջ
մէկ վայրկեանի մէջ 30,000 անգամ կը
թաւալի։ Բացերուն պատկերը շարժա-
պատկերի երիզի մը վրայ կ'առնուի
որ մէկ մանրերկրորդի մէջ կէս մղոն
արագութեամբ կը շարժի։

ԳԱՐՍ. ԾՈՎԸ կը գտնուի Եւրոպայի և
Ասիայ հիւսիսային սահմանագլխին վը-
րայ։ Ռուս աշխարհագէտ մը բնական
կարգ մը աւսումնասիրութիւններ կա-
տարելէ ետքը կը յայտարարէ թէ այս
ծովուն մէջ կղզի մը կայ որ դեռ օռէ
մարդու մը կողմէ նշմարուած չէ։ Աս-
կէ առաջ իր ըրած ասոր նման մէկ
գուշակութիւնը շիտակ եղած է։

ՏԱԿԱԻՆ մինչև այս տարուան ըս-
կիզը կը կարծուէր թէ հիւլէն բրտոն-
ներէ և հլեկտրոններէ կը բաղկանայ։
Սակայն մեծանուն քիմիագէտ Տիկ.
Քիւրիի աղջիկը վերջնականապէս փաս-
ած է թէ հիւլէի մէջ Աիքթո անուանով
ուրիշ մասնիկ մ'ալ կայ։

ՀՕՄՕ ՓՐԻՄԻԿԵՆԻԸՍ (Homo Primi-
genius) կոչուած նախամարդու տեսա-
կին պատկանող կնոջ մը և տղու մը աս-
կորները գտնուած են Հունգարիոյ
մէջ։ Զանոնք գտնող Տր. Փատիքս ա-
նուն երկրաբանին կաքծիքին համեմատ

100,000 տարուան հնութիւն մը կը ներկայացնեն: Նոյն քարայրին մէջ գըտնուած են նաեւ սառի դարու ասպրածարձի, առիւծի, գայլի, աղուէսի և ուրիշ վայրի անասուններու ոսկորները:

ՎԱՂՈՒԱՆ ՏՈՒՆԸ. Մի քանի տարի վերջ Ամերիկայի մէջ պիտի կառուցուին այն տեսակ տաւեր որոնք թէ տեսքով և թէ կազմութեամբ բոլորովին տարբեր պիտի լինին ներկայիս կառուցուած շէնքերէն: Ապագայի այս տաւերը բոլորովին մետաղէ և կամ այն տեսակ նիւթերէ պիտի շինուի որոնք տակաւին շինութեան արհեստին մէջ չեն գործածուած: Անոր գանազան մասերը գործարանին մէջ պիտի շինուին և մէկ չափաթուայ ընթացքին պիտի կառուցուի միայն որոշ մասերը սեղմիչներով և սողակներով (clips and bolts) իրարու հետ տարացնելով: Ամէն տեսակէտով ան կատարեալ պիտի ըլլայ՝ իր մէջ զգալութիւն և ջերմութիւն արտադրող մեքենաներ, էլեկտրական պաղօցներ (refrigerator) բաւարարող և օդի թափումը վերաբերեալ գործիքներ պարունակելով: Հիմակուան ապարանքներէն նոյն իսկ տաւի հանգստութեամբ պիտի ըլլայ. այս ձեւով կառուցուած տուն մը նոյն զանգուածը ունեցող այժմեական տան մը գնոյն կէսը պիտի արժէ:

Այն տեսակ յատակագիծ մը պիտի պատրաստուի որ ի պահանջել հարկին ուղղուած աստիճան մէկ մասը պիտի հանուի և անոր տեղ նորը անցըուի:

Ապագայի այս տունը մետաղէ պիտի կառուցուի օակայն ամբողջութեամբ և չժանգոտող պիտի ըլլայ: Պատերը երեք մատնաչափ թանձրութիւն պիտի ունենան: Տանիքը նոյնպէս չժանգոտող մետաղով պիտի ծածկուի մէկ մատնաչափ թանձրութեամբ:

Տան մէջ որպէս լուսաւորութեան միջոց անդամանիչակային ճառագայթ

արձակող խողովակները պիտի գործածուին որ ակտաբաւական ոյժ ունին: Որոնք ձեղունին և պատերուն մէջ պիտի զետեղուին:

Այս տեսակ շէնքերը կրնան աժան գինով կառուցանել իւրաքանչիւր խորանարդ ոտք 45-60 ֆէնթ արժողութեամբ:

Այս տեսակ նոր դրութեամբ կառուցանելիք շէնքերը հարկւր հաղարարական վարձկան ընտանիքներու իրենց անձնական տունը տանելու սատար պիտի հանդիսանան:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՇԻԿԸՆ Նահանգին ճարտարագէտները օճառի պղպեղով շատ հետաքրքրական փորձ մը կը կատարեն գիտնալու համար թէ իրենց կառուցած կամուրջը այսինչ ծանրութեամբ բեռ մը կրնա՞յ կրել առանց կոտրելու:

ՄԱԽՐԻ (spruce), ԷՂԵԼԻՆ (hemlock), և ՄԱՅՐԻ (cedar), ծառերուն փայտերը մասնաւոր տար գանակով մեքենայի մը մէջ դրուելով մէկ 100 բարդ մատնաչափ հաստութեամբ փայտի թերթերու կը վերածուին, որոնք կը գործածուին տպագրութեան համար: Ասոնցմէ՝ յետոյ, զեղեցիկ և աղակալ գիրքեր կազմել կարելի է: Այս փայտի թերթերը ի պահանջել հարկին կըրնան փրցուիլ թուղթէ թերթի պէս:

ՄԷԿ ՄԱՐԴ ԱՄԲՈՂՋ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ

ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

ԿԱՐ ՎՈՒՏ ՏԻԹՐՈՅԹԵՐ Մարդ մըն է որ ամբողջ Բրիտանական կայսրութեան հետ կը մրցի: Անգլիան յատկապէս կ'աշխատի որպէսզի, օգին մէջ, ցամաքին և ծովուն վրայ ինք առաջնութիւնը ստանայ: Այս նպատակը ի կատարածելու համար Անգլիա հինգ միլիոն տղաք ծախսած է հսկայ և զօրաւոր մեքենաներ շինելու, որոնց շնորհիւ Բրիտանական մարզիկներ արագօրէն թեան մրցանիշներ չահեցան օգի մէջ և

ցածաքի վրայ: Բայց գալով ծովուն վրայէն արշաւին կար Ուուտ կը խլէ առաջնութիւնը: Ասկէ առաջ երեք անգամ պարտուած է երեք անգամ ալ յաղթանակը տարած է: Սակայն վերջերս նորէն ախոյեանութեան տիրացաւ:

Կար Ռուտի ամբողջ կեանքը լի է արկածներով, նա պատերազմէն թէ՛ առաջ եւ թէ՛ վերջը այս տեսակ գործերով կ'զբաղէր: Ինք նաւային ճարտարագիտութեան, կալի մեքենաներու, եւ նայնիսկ աստղաբաշխութեան ասպարէզին մէջ ինքզինքը նետած է:

առաջին անգամ ինքն էր որ իր շոգեմակոյկով ծովու վրայէն վայրկեանը մէկ մղոն արագութեամբ տուրաց: Նմանապէս ինքն էր որ կրկին շոգեմակոյկով մը ժամը 100 մղոն արագութեամբ ընթացաւ:

Կար Ուուտ, որ հիմայ 51 տարեկան է, ձեռք ձգած յաջողութիւնը մասամբ կը պայտի իր շինած շոգեմակոյկներուն զիտական ճշտութեան: Սեպտ. 3-4 ին Միս Բրիտանիայով նորէն պիտի մրցի, մրցակիցը 38 տարեկան է: Իր գործածելիք մակոյկը 0ր. Ամերիկա 10 կը կոչուի որ գրեթէ 38 ուրք երկայնութիւն ունի: Ծովու վրայ արագութեան մրցանիշը զոր հիմայ Կար Ուուտ կը պահէ ժամը 111.72 մղոն է:

Աշխարհի չորս մեծ արագութեան մրցանիշները զոր Անգլիա շահած է հետեւեալներն են: ա. Սըր Մալքոլմ Բէմփպէլ ինքնաշարժով, ժամը 253.87 մղոն: բ. Լիօթընան Սթէյնֆորթ սաւառանակով, ժամը 408.8 մղոն: գ. Ճ. Ս. Բայթ, շարժանիւի (մօթօր սայքը) ախոյեանը հանդիսացաւ 150.7 մղոն մէկ ժամուան մէջ ընթանալով: դ. Իսկ երկաթուղւոյ մրցանիշի արագութիւնը ժամը 31.6 մղոն եղած է:

Եթէ Կ'ՈՒՋԵՍ որ շտեմարաններու մէջ ուտեցողէնք առանց աւրուելու

պահուին զանոնք (խոտի) կանանչ եւ սեւ գոյնով ամաններու կամ փաթոյթներու մէջ դիր. որովհետեւ այս գոյնները արեւու ճառագայթներուն թափանցումը կ'արգիլեն, իսկ միւս բոլոր գոյները չեն արգիլեր: Փորձի մը համար տեւ եւ բաց գոյն շիշերու մէջ ալիւր դրուեցաւ: Տարի մը վերջ երբ շիշերը բացուեցան գտնուեցաւ որ սեւ գոյնով շիշի պարունակութիւնը անեղծ մնացած էր իսկ երկթորդը աւրուած:

Միեւնոյն փորձը կարգի վրայ ալ կատարուեցաւ միեւնոյն արդիւնքը տալով:

ՄԻՆՆԵՍՈՒՍԻ ՄԷՋ կ'ախք մը գետնին տակէն հանուեցաւ որ ըստ ամերիկեան գիտնականներու եզրակացութեան 18,000 տարուան հնութիւն մը կը կրէ: Հետեւաբար մօտաւորապէս 20,000 տարի առաջ Ամերիկայի մէջ մարդիկ կ'ապրէին: Այս կ'ախքը Սառի դարուն կազմուած 12 ոտք խորունկ տիղմի մէջ գտնուեցաւ: Քսան տարեկան երիտասարդի մը ուրուագիծը կը պատկերացնէ ան որ էսքիմացի ցեղին հետ աւելի մօտ յարաբերութիւն ունի քան Ամերիկացի հնդիկներուն:

ԵՐԲ ԱԴԱՄ ԱՆԴԻ կտոր մը բեւեռացեալ լոյսի (polarized light) ճառագայթներուն ենթարկենք, անդամանիշակաւ գոյն եւ կամ անդրակարմիր ճառագայթներ ազամանդէն դուրս կը տրուին որոնք (galvanometer) կալվանաչափ գործիքին վրայ ընդունւալ մը յառաջ կը բերեն: 250 ազամանդի կտորներու մէջ միայն հինգ հատը կրնայ գտնուիլ որոնք այս տեսակ ճառագայթներ կ'արտադրեն:

ՓՐՈՑ. ՇԷՐ Թունաստանի Կորնթոս քաղաքէն կնոջ դամբարանի մը մէջ հրեայի ճերմակ փոշի գտաւ որ նոյն քաղաքի բնակիչներէն 2400 տարի առաջ կը գործածուէր: Բիմիազէտները կը ըսեն թէ այս փոշին կը պատրաստուէր

այնպէս ինչպէս հիմա զայն կը պատ-
րաստեն:

ՆԻՒ ԵՈՐՔԻ ԿԵՆԴԱՆԱՐԱՆԱԿԱՆ
պարտէզին կապիկները երբ պաղառա-
թեան համաճարակէն բռնուեցան, մաս-
նաւոր մեքենական թոքեր շինուեցան
զանոնք դարմանելու համար: Թոքը
սնկուելի ձև ունի արոն մէջ կապիկը
կը զետեղուի: Ասոր կից կաթսայ մը
կը դրուի արուն մէջ մայրի լուծողու-
թիւն մը կ'եռայ: Լուծողութենէն ար-
տադրուած շոգին խողովակի մը միջո-
ցաւ սնտուկին մէջ կը փոխանցուի այն-
պէս որ իւրաքանչիւր շնչառութեամբ

կենդանիին պաղառութիւնը կը բուժ-
ուի:

ՊՈՍՏՈՆԻ մէջ անուաւոր աւանդու-
ներ շինուած են որոնց միջոցաւ շար-
ժական երկյարկանի տուն մը շատ մը
թաղամասերու մէջ կրնայ առեւտուրը
յառաջ տանիլ: Երբ շէնքը շարժի օան-
դուխներն ալ կը շարժին այնպէս որ
քիչ ժամանակամիջոցի մը մէջ շատ յա-
ճախորդներ կրնան ներս մտնել: Սան-
դուխներուն տակէ ձգախէժէ անիւներ
դրուած են որոնք շէնքին հանգարտ
շարժելուն կը սատարեն:

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՍԻՒՐԻՈՅ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՆՁԸ ԵՒ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ

Այս Գուրիե օր Սիրի թերթը այս մասին
կը գրէ:—

Կառավարական վիճակագրութեան
համեմատ կուտակալութեան գաւառնե-
րուն մէջ փնտը՝ զոր երաշտութիւնը
ձմեռնային և ամառնային ցանքերու
պատճառած է՝ հարիւրին 60 է: Այս
փնտը տեղէ տեղ 40 առ հարիւրէն 100
առ հարիւր կը տարբերի: Նկատի առ-
նելով որ գնահատիչ յանձնախումբը
պետական գանձին չահը կը պաշտպանէ,
ապահով կերպով կրնանք ըսել թէ այս
փնտը միջին հաշուով հարիւրին 75 էն
պակաս է: Այս կը նշանակէ որ հողա-
գործին կը մնայ միայն հարիւրին 25:

Կուտակալութեանս բնակչութիւն
մէկ մեծ մասը երկրագործներէ և երկ-
րագործներէ կախում ունիցող արհես-
տաւորներէ և խանութպաններէ կը
բաղկանայ: Ահա այս հարիւրին 25 ու
այսչափ ժողովուրդ պիտի ապրի, իր
անասունները պիտի ապրեցնէ, սերմ-
ցու պիտի հայթայթէ և տուրք և պարտք
պիտի վճարէ: Ամէն ոք անկասկած

մեզի պէս կ'ընդունի թէ երկրագործնե-
րուն համար այս հարիւրին 25 ու միայն
այս պէտքերը գոհացնել և տուրք վճա-
րել հրաշքով կարելի է:

Ամէն դասակարգէ մարդոց բախտը
երկրագործներէ կախում ունի, քանզի
մեր երկիրը երկրագործութենէ զատ
ուրիշ հասոյթի աղբիւր մը չունի:
Փաստաբան, առեւտրական, բժիշկ,
սրհեստաւոր, սեղանաւոր, մէկ խօս-
քով պաշտօնեաները բացառութիւն ըլ-
լալով բոլոր ժողովուրդը, երկրագործին
չափ և անկէ ալ աւելի փնտսուած են:
Ժողովուրդին գնելու կարողութիւնը
հարիւրին 75 տկարացած է, պերճանքի
տուրքաւեցեալն համար այս կարողու-
թիւնը 95 առ հարիւր պակասած է:

Եթէ շուկաները պտըտինք և խա-
նութպաններու, առեւտրականներու և
արհեստաւորներու հարցնենք այս մա-
սին՝ մեր ըսածին ճշմարտութիւնը պի-
տի հաստատենք: Խանութպանները
չահ չեն տկնկալիւր, այլ գոհ պիտի ըլ-
լան եթէ իրենց ընտանիքին առօրեայ

ծախքը հոգալու և խանութի վարձքը վճարելու բաւական առելտուր ընեն :

Բոլոր մարդիկ և մանաւանդ քաղաքային իշխանութիւնները այս ճշմարտութիւնը լաւ կը հասկնան, բայց եւ իւրաքանչիւր տնօրէնութիւնը այս հասկնալ չուզեր : Թէ՛ քաղաքը եւ թէ՛ գիւղերը ո՛չ միայն այս տարուան այլ նաեւ անցեալ տարիներու յետեալ տուրքերը կը պահանջեն : Պարտականներու առաւելին առարկաները, հունձքն ու անասունները կը բռնագրաւեն : Ժողովուրդը առանց ողբի և ընդդիմութեան կը գիտէ կը կենայ : Բռնագրաւեալ առարկաները, կենդանիները չուկայ կը հանուին ծախուելու, բայց գնորդ չի գտնուիր, քանզի գնելու կարողութիւնը կը պակսի : Այս առարկաներն աւելեալները գնողներ ի՞նչ պիտի ընեն : Այսօրուան 100 ֆրանկի ծախու առնուած բան մը չաբաթ մը ետքը պիտի ծախուի 50 ֆրանկի : Եւ հարկաւարները բռնագրաւեալ բաները իրենց տէրերուն ետ կը դարձնեն, բայց եղած ծախքը պարտքին վրայ կը բարդուի :

Ահա կայութիւնը այսպէս է : Կառավարութիւնը իրաւունք ունի խանութի զոյւրքիւնը պահելու համար տուրք պահելու : Տուրք վճարողները իրաւունք ունին, խանութի սնկարող եմ տալու, դրամ չունին, ծախելիք բան չունին, վարձկանները չեն վճարեր, եւ չեն կրնար փոխառութիւն ընել :

1926 ի միջոցին Հայաստանի Սուրբիոյ մէջ քանի ապստամբութիւնը կը շարունակուէր, Հիւսիսը պետութեան բուրձնաւոր ծախքը հոգաց և Հալէպ 2-3 միլիոն տուրքական ռալի կանխիկ վճարեց Տաճարակաւոր : Այսօր երկրին մէջ ապստամբութիւն չկայ, բայց բնութիւնը երկրին զէմ կռուի ելած է և բոլոր երկիրը ընդհանուր սնանկութեան մատնած է :

Տաճարակաւոր վիճակը ամէն կերպով մերինէն շատ աւելի լաւ է : Ուրեմն այս գէշ տարին անցնելու համար Տա-

ճարակաւոր պէտք է մեզի ետ վճարէ մինչև այս մեր իրեն տուած դրամները : Միայն վերջին երկու տարուան միջոցին կառավարութեան հաշւոյն Տէր Զօրի համար 900 հազար ռալի վճարեց :

Եթէ մեր այս պահեստի գումարները ետ դանձաւին կրնանք աշխատանքի ձեռնարկել, անգործներուն գործ հայթայթել, քաղաքապետութեանց դրամ տալ և տուրք վճարողները հանգիստ ձգել :

ՏԱԳՆԱԳԸ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Այս համալսարանը իբր Սուրբիոյ մէկ պետական հաստատութիւնը 13 տարուան կեանքը աւնի, որուն միջոցին օրէնսդրական և բժշկական ճիւղերէն մեծ թիւով աւուրեալ տարտներ տուած է : Պէյրութի Ամերիկեան և Ֆրանսական համալսարաններուն ամէն տարի ուրաւագոյն բժիշկներն աւուրեալ բոլորներն աւելատի առնելով շիտակ է խորհել թէ այս երկիրը այսչափ թիւով ազատագրութեաններու պէտք չունի : Պէտք եղածէն աւելի հայթայթուած և ներկայ տապաւալ և կառավարական պիւտճէի բացը նկատի առնելով Հր Գուրիե քը Սիրի թիւթը կ'առաջարկէ որ Տաճարակաւոր պետական համալսարանը, որուն տարեկան ծախքն է մէկուկէս միլիոն ռալի լիբան, և Սէլիմէի երկրագործական բարձր վարժարանը ցրակուն, և այս հաստատութեանց եղած ծախքին մէկ փոքր մասովը երկրին պէտք եղած ճարտարագէտներ պատրաստուին Եւրոպա, և միացած դրամը գործածուի հոս ուրիշ օգտակար ձեռնարկներու, զօր օրինակ գրագիտութիւնը ընդհանրացնելու համար Դախական վարժարաններու բացումի և այլնի : Սուրբիոյ Ժողովուրդին հարիւ-

րին 80ը, կ'ըսէ յիշեալ թերթը տակա-
ւին անգրագէտ է:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՖՐԱՆՍԱՍԻ քրիչս երեւոյնի կեդրոնէն
8000 տուար նպաստ ղրկուած է Գեր-
մանիոյ թրէյտ եռանեղններուն՝ անոնց
անգործներուն տրուելու համար:

ՇԻԳԱԿՕ 1929ին 225 դրամատուններ
ուներ. այս թիւը ներկայիս 72ի իջած
է:

ԱՄԵՐԻԿԱՍԻ ագարակապանը իբրո-
ւր բարագործներէն փոխարէն այսօր
պատերազմէ առաջ ստացածին միայն
հարիւրէն 52ը կ'ստանայ:

ԲՐԻՏԱՆԻՈՅ մէջ ներկայիս ամէնօր-
եայ և կիրակնօրեայ լրաթերթերու ըս-
պառած օրինակներու թիւն է 29 միլի-
ոն: Մախառած առաւօտեայն և երե-
կայեան լրաթերթերու տարեկան ար-
ժէքն է 19 և կէս միլիոն անգլիական
ոսկի, իսկ կիրակնօրեայ լրաթերթե-
րուն է 7 և կէս միլիոն:

ՖՐԱՆՍԱՍԻ արտածումը 1932ի ա-
ռաջին 7 ամիսներու միջոցին 1931ի
նոյն ժամանակամիջոցին արտածումէն
42 առ հարիւր համեմատութեամբ պա-
կաս եղած է: 1931ին մէջ արտածումը
18,654,362,000 ֆրանք էր, իսկ այս
տարի 11,312,205,000 ֆրանք:

ԱՄԵՐԻԿԱՍԻ մէջ տիրող տնտեսա-
կան տագնապը պատճառ եղած է որ
շատ մը մարդեր քաղաքները ձգելով,
ագարակները հաստատուին իրենց ապ-
րուստը հողագործութեամբ ապահովե-
լու համար: Կառավարութիւնը կը քա-
ջալիքէ այս շարժումը նիւթապէս օգ-
նելով այսպիսիներուն: Միայն Այտա-
հօ Նահանգի մէջ 796500 տուար փոխ-
տրուած է այս նպատակով:

ՖՐԱՆՍԱՍԻ Մէք ապրուստը 100 ին
հինգ համեմատութեամբ եղած է, իսկ
միւս կողմէն անգործներու թիւը մօտ
2500 պակսած է:

ԶԱՀԼԷԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Զահլէի ժողովուրդը պէտք եղածին
չափ քաղաքակիրթ է և եկեղեցապէս
իր օգը զով, ջուրը պաղ, և խաղողը ա-
ռաւել քաղցր ըլլալով՝ գրեթէ ամառա-
նոց մը դարձած է: Ամէն տարի, այլ
և այլ տեղերէ հոծ բազմութիւն մը կու-
գայ հոս, անոր ընձեռած բարիքները
ըմբռնելու:

1920ին քանի մը ընտանիքներ իրենց
հայրենիքին հրամեշտ աւելով՝ կ'ա-
պաստանին Զահլէի օտար հորիզոնը:
Հետզհետէ, բազմաթիւ հայեր Զահլէն
իրենց ապրուստին ապաստան սրահ կը
ընտրեն: Պանի մը տարիներ ետք
հայոց թիւը—Լուսաւօրջական թէ Բո-
ղոքական—կը բարձրանայ 860-466ի:
Հոս, հայերը տեղացի բնիկ տարրին
հետ հաշտ ապրած են:

Այս միջոցիս, երեք Աւետարանական
պատկառելի դէմքեր—Լուսաւոյի Մը-
կըրտիչ աղա Կոստանեան, Կարուճ ա-
ղա Վարպիտեան և Արթին աղա Սրադ
պոնեան—Գրիւտոսի սէրէն սողալուած՝
յղացումը կ'աւելնեն եկեղեցիի մը պահ-
պանման: Ամերիկա և այլ տեղեր,
ծանօթներու թէ անծանօթներու, հա-
մակներ կ'աւելանային այս նպատակին ի-
րազօրման համար նպաստներ քաղե-
լու: Վերոյիշեալ անձինք, իրենց ձեռ-
նարկներէն յաջողութիւն դանդիով՝ փո-
թով գործի կը լծուին:

Հոս, տարիներէ ի վեր Արաք Երի-
ցական եկեղեցիի մը իր գոյութիւնը կը
պահէ, նուազ թիւ ներկայացնող ժո-
ղովուրդով մը: Երեք աւճորները ա-
ռանց յապաղելու, արաք բողոքական-
ներու եկեղեցական ժողովին կը ներ-
կայանան: Կ'առաջարկեն որ՝ նոյն եկե-
ղեցւոյ յարկին տակ իրենք ալ հովա-
նաւորուին: Բաղձանքը շուտով և օր-
րով կ'ընծայուի զԱստուած փնտոյղ-
ներուն:

Մեր եկեղեցւոյ կազմակերպիչները 1922 ին, առաջին առթիւ իբր հոգեւոր հովիւ կը հրաւիրեն Պատ. Միքայէլ Պիչմէնանը՝ որ եօթը ամիս ծառայելէ ետք, կը մեկնի Զահէէն: Նոյն տարի պաշտօնի գլուխ կ'անցնի Պատ. Համբարձում Սիմէոնեանը, որ նաև կտրճ պաշտօնավարութիւն մը կ'ունենայ և 1923 ի վերջերը գործէ կը քաշուի: Երրորդ հրաւիրագիրը կը տրուի Պատ. Հայկազուն Ղազարեանի: Այն՝ իր ծառայութիւնը սկսաւ 1923 ին և շարունակեց հաւատարմութեամբ մինչև 1927, Նոյն թուականին, Վեր. Յակոբ Շնորհոքեան դեռ նոր Պէյրութի Առաջնածարանական դպրոցը աւարտած ըլլալով՝ կ'ընդունի Զահէէն իրեն զրկուած հրաւիրագիրը: Իր հինգ տարուան գործունէութիւնը կը ներկայացնէ մեզի բեղմնաւորութեան շրջան մը՝ որուն ընթացքին վէճի և անհամաձայնութեան փոքր նշան մ'իսկ չտեսնուեցաւ: 1932 ին վերջ կը տրուի իր գործին: Այս Օգոստոսին, Պատ. Յովհ. Աբգարեան պատիւը ըջաւ մեզ, մեր հրաւիրագիրը ընդունելով: Մենք մեր երիտասարդ հովիւէն արժանավայել պատուներ կ'ազնկանք:

Զմռանը ըսելու որ, եկեղեցւոյ հաստատման թուականին յաջորդ տարին իսկ, մեր անպահանջ դպրոցը հաստատուեցաւ: Թէև մեր դպրոցը այս վերջին տարիներու պատճառած տագնապին պատճառաւ պարտքի լուծին տակ է, բայց դեռ քաջաբար ան իր վառ կեանքը կը պահէ, հասնելու յաջողութեան ուղիին:

Զահէի եկեղեցւոյ նիւթականը կը հայթայթուի քանի մը աղբիւրներէ: Ամերիկայէն կարգ մը անձեր, փոքր գումարներ կը զրկեն ամէն տարի: Ամէն տարի օգափոխութենէն վերադարձողները իրենց մեծ կամ պզտիկ նուէրները կուտան եկեղեցիին: Բարեգործականը

ինչպէս ամէն տեղ, մեր դպրոցին իր օգնողի դերը կը կատարէ, հոս ալ, ամէն տարի կոկիկ գումար մը կը յատկացնէ: Մինչև ցարդ, կառավարութիւնը իր դերին մէջ չէ թերացած: Առկէ զատ, բարեգործ անհատներ երբեմն չեն ուշանար իրենց նուիրատուութիւնները ընելու:

Այս եկեղեցւոյ կազմութեան սկզբնական թուականներուն, բոլոր ընտանեաց գումարը 40ի հասած է: Իսկ ներկայիս, անոնցմէ շատեր օտար քաղաքներ մեկնելով՝ ընդամէնը 20 ընտանիք կը գտնուի, 125 անհատներէ բաղկացեալ: Բացի քանի մը բացառութիւններէ, անոնց ամէնքն ալ տիրացած են հոգեւոր կեանքին: Եւ ի՞նչ երանելի կենցաղավարութիւն մը կը վարեն անոնք: Անոնց մէջ Սատուծոյ կրակը արծարծւած է անշէջ կերպով մը: Անոնք կը քարոզեն հարուստին ու տնանկին, մեծին և փոքրին: Զմեռնային գիշերներ, մինչ դուրսը սաստիկ կը փչէ փոթորիկը և թանձր է խաւարը, այս եկեղեցւոյ հոգեւոր եղբայրները Ս. Դիրքը իրենց անութներուն տակ բռնած, կը հաւաքուին որոշեալ վայր մը, ուր օրհնեալ ժամեր կը սահեցնեն:

Զահէի եկեղեցին իր ժրջանութեամբ, նեղը միացած պարագաներուն իր ցուցուցած երկար համբերութեամբ, օտարներուն և թէ գիտողներուն աւջադրութիւնը կը գրաւէ:

Զահի ՍԱՐԳԻՍ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԳԷՍԱՊԻ ՀԱՅ ԱՒԵՑ. ԵԳԵՂԵՑԻԻ ԿԵԱՆՔԷՆ

Հեռեւեալ գրութիւնը թիպէ Յունիս 30 ին գրուած և թայց մեզի հասաւ Սեպտ. 7 ին: Ծ. Խնր.

Երիտասարդահեաց ընկերակցութեան կողմէ Յունիս 15, կիրակի իրի-

կուռն հանդէս մը ներկայացուցաւ՝ միայն կրնե՞րու և մանուկներու համար, որոնք եկեղեցիին սրահը լեցուցած էին: Յայտագիրը շատ գեղեցիկ և կարճ տւրամէ մը, մի քանի հոգեւոր արտասանութիւններէ և մեծ աշխատանքի արդիւնքը եղող երգերէ կը բաղկանար: Հանգէսը փակուեցաւ Վեր. Քասունիի 15 վայրկեան տեւող խրատով և աղօթքովը:

Այս ընկերակցութեան կ'անդամակցին 50 ի մօտ աղջիկներ, որոնց մեծ մասը 10-15-20 տարեկան են: Զինադադարէն ետքը առաջին անգամ էր որ ընկերութիւնը այսպիսի ներկայացում մը կուտար, 1925 ին ան արդէն լուծուած էր: Շատ ուրախալի է որ Տիկ. Քասունիի և Օր, Վիգորիա Մանուկեանի և կարգ մը քէսպցի օրիորդներու ջանքերով նեղ սանձանի մէջ գործը վերսկսաւ: Տիար Յ. Պուճիգանեան ևս բոլոր տարին դպրոցի մէջ աշակերտութեան հետ լաւ յարաբերութիւն ունեցած է, և անոնց վրայ հոգեւոր լաւ տպաւորութիւն ձգած է: 10-12 տարեկան 80 էն աւելի մանչերէն ընկերութիւն մը կազմած է, որուն համար ամէն կիրակի հոգեւոր հաւաքոյթ մը կը վարէ և երգեցողութեան իր ջութակով կ'առաջնորդէ: Այս մանչերուն կը թելադրէ միջնաբնակայ աղօթաժողովներէն գոնէ մէկուն մասնակցիլ, և բաւական թիւով պատանիներ աղօթքի մասնակցած են: Վեր. Քասունիին ալ աղօթաժողովներէն մէկը հայերէն լեզուով և մասամբ ալ մանուկներու յատուկ ըրած է: Կը սիրենք յուսալ որ այս օրհնեալ գործը յառաջիկային աւելի պիտի զօրանայ: Ապագան այս մանուկներէն կ'ստուգուին:

Յունիս 23ին Կ. Դպրոցին հանդէսը կատարուեցաւ, որ նաև հոգեւոր ազդեցութիւն մը ձգեց: Հոս ալ Տիկ. Քասունիի և Տիար Պուճիգանեանի ջանքե-

րը գնահատելի էին:

Յունիս 28ին Մանկապարտէզի և Նախակրթարանի հանդէսները միասին եղան: Բոլոր ուսուցիչներն ալ իրենց լաւագոյն ճիգերը թափած էին: Մանուկներ համարձակութեամբ իրենց կը տօրները արտասանեցին: Տիկ. Քասունիի ջանքերուն շնորհիւ երգեցողութեանց մէջ յառաջ եկած յաջողութիւնը ունկնդիրներու հիացում պատճառեց: Բայց իբր ստեղծարարական ժողովուրդ մը փոխանակ աղօթքով հանդէսը բանալու՝ յոտնկայս «Մեր Հայրենիք» երգուեցաւ: Հանդէսը փակուեցաւ «Հայր Մեր»ով, բայց արդէն ժողովուրդին երեք չորրորդը գացած էր: Հանդէսը լըմնալէն քիչ ետքը նախագահը ինծի հարցուց թէ հանդէսը ինչպէ՞ս անցաւ: «Գեղեցիկ հանդէս մըն էր, որուն համար շատ ջանք թափուած էր, բայց ցաւալի է որ Աստուած ամէնէն ետեւ մնացած էր», պատասխանեցի:

Հոս կ'ուզեմ յայտնել ճշմարտութիւն մը զոր 7-8 տարիներ առաջ քարոզիչէ մը լսած եմ:

«Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ «առով սկսող սա երեք բառերու (1) Աստուած, (2) ազգ, (3) անձ. կամ աստուածասիրութիւն, ազգասիրութիւն և անձնասիրութիւն: Այս երեք տէրերն ալ իրենց տեղերուն մէջ տուրք և վսեմ են, բայց եթէ իրենց տեղերը չեն գըտներ կործանում յառաջ կը բերեն: Սիրոյ կատարեալ յայտնութիւնը Գողգոթայի տուրք խաչին վրայ եղաւ: Ուրիմըն միւր բոլոր սէրը զօրացնելու և կառավարելու համար վայն պէտք է տառաջին Այթի, Աստուծոյ, յանձնենք: Մարդկային կեանքի մէջ երբ ասոնք իրենց տեղերը կը փոխեն այն ատեն կեանքը լարելիւթեամբ կը վերածուի: Երբ անձնասիրութիւնը իշխէ ազգասիրութեան վրայ, և ազգասիրութիւնը կը ջանայ կառավարել Աստուածասիրութիւնը բո-

լօր աշխարհ կը խաւարի: Քանզի այդ անսահման սէրը չի պարփակուիր ոչ մէկ անհատի կամ ազգի ձեռքին մէջ: Ան բոլորին վրայ իշխող պէտք է ըլլայ:

Յունիս 29 ին Վեր. Քասառնիի տաւ. նը նուազահանդէս մը սարքուեցաւ, Եւ Տիկ. Քասառնիի մէկ քէսապցի և երկու օտար աշակերտները երկու տարուան միջոցին իրենց սորված եղանակներէն նուագեցին: Տիար Տիգրան Քասառնիին մերթ դաշնակի վրայ և մերթ իր ջութակով իր մօրը ընկերացաւ: Հանդէսը մէկ քէս կէս ժամ տեւեց պատրաստ յայտագրին համեմատ, որմէ Տիկ. Քասառնի քսանեակ մը ընդօրինակած էր իր ձեռագրով հանդիսականներու տաւ. լու համար: Մինչեւ վերջը հանդէսը շատ լաւ անցաւ:

Նոտած տեղս հիացումով համակուած կը խորհէի թէ Քէսապի Աւետ. ժողովուրդին համար այսպիսի առիթ մը հազուադէպ է: Այսպիսի հոգեւոր և կարող հովիւ մը, միեւնոյն ատեն դպրօցը կառավարելու մէջ փորձառու տնօրէն մը, հոգեւոր և տաղանդաւոր դաշնակահար տիկին մը, գոլէճաւոր բարեպաշտ երիտասարդ զաւակ մը երկու տարիէ ի վեր հոս կը գտնուին: Քէսապի ժողովուրդը առոնցմէ որչա՞փ կրնար օգտուիլ, բայց ցաւալի է որ պէտք եղած չափով անոնցմէ օգտուելու կերպը չգիտցան:

Այս երկու տարիները թէպէտ երեսութապէս աղմկալից անցան, բայց հոգեւոր եկեղեցին արթնցաւ ապրելու համար: Այն տեղ ուր մեռելութիւն կը տիրէ ձայն և շարժում չեն ըլլար: Երբ կիանքը կ'սկսի շարժումը միատեղ կը սկսի: Մտնուկը ծնելէ ետքը կուլայ, կը հաւատամ որ, թէպէտ իբր շատ տըկար մանուկ մը, Քէսապի եկեղեցին ծնած է և կ'ապրի: Բայց ինչպէս որ տկաք և հիւանդ մանուկ մը շատ կուլայ, Քէսապի եկեղեցին ձայնը շատ կը լսուի: Քիսապ (Տիկ.) ՌԱՀԷԼ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ՀԵՅ ԿԵԱՆՔ

ՊԵՏՐՈՒԹԻ Միացեալ Աստուածաբանական դպրոցը (Աթէնքի Սփուլ ավ Բիլի-ճընը և Պէյրութի երիցական Աստ. դպրոցը) պիտի բացուի յառաջիկայ Հոկ. 6. ին: Գիշերօթիկ աշակերտները պիտի ընդունուին Սեպտեմբեր 30ին:

Վ. Վ. ՔԵՕԹԷՔԼԵԱՆ Լաթաքիայէն գրութեամբ մը մեղի կը գրէ թէ քաղաքին քրիստոնեայ երեսելիներէն Իսահակ Նաթրի հազիւ 50 տարեկան հասակին մէջ մեռած է և յուղարկաւորութիւնը կատարուած է Սեպ. 6ին, կէսօրէ առաջ: Հանգուցեալը մեծ հարժտութեան տէր և իր բարեօտութեամբը ծանօթ, յարգուած և սիրուած անձնաւորութիւն մը եղած է: Թաղման հանդէսը շատ փառաւոր եղած է մասնակցութեամբ 4000 հոգիներու, որոնց մէջ եղած են քաղաքային և զինուորական բոլոր պաշտօնէութիւնը: Զոհատ մը զինուորական պատիւ ըրած է: Զանազան միութեանց, եկեղեցիներու և դպրոցներու ներկայացուցիչներու կողքին թափօրին մատ կազմած են նաև Ալավիներ: Մարմինը եկեղեցիի բակը թաղուած է:

ՎԵՐ. Ն. ՍԱՐԵԱՆ, Հալէպի Բիթէլ Հայ Աւետ. եկեղեցիի նօր հովիւը, հաւած է քաղաքս Սեպ. 8 ին: Սեպ. 11ի կիրակի առաւել Վեր. Կ. Յարութիւնեան զայն ներկայացուց ժողովուրդին և բեմը յանձնեց անոր, որ 40 վայրկեան տեւող քարոզով մը յայտնեց թէ ինչպէ՞ս և ինչո՞ւ այս եկեղեցին եկած էր: Վեր. Սարեան բացօթոյ և զօքաւոր շեշտով ըսաւ թէ միայն ու միայն խաչակալ Յիսուսը քարոզելու կոչուած է: Վերապատուելիին այս առաջին օրուան պատգամը շատ լաւ կերպով ընդունուեցաւ ներկաներուն կողմէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ կառավարութիւնը բամպակի ֆաբրիկայի գէմ իբր գարման երկու սաւառնակներով 36 հազար քիլո ծծումբ արկած է:

ՓՐՈՅ. Զ. ՊԵՋՅԱՆԻ զաւակը **ՏԵՔՐ. ԱԼԵԽԱՆ ՊԵՋՅԱՆ ՍԵՂԱՆ. Տ** ին Դէրքուք (Իրազ) ծնունդ է հիւանդանոցի մը մէջ պաշտօնավարելու համար:

ՕՐ. Ն. ՏԱՄԱՏԵԱՆ իր դասարանին առաջինը ըլլալով աւարտած է Փարիզի էֆոյ Նորմալ ջը Միլիթը, ուր զրկուած է Պէյրուսի էնսիքիք ջը Միլիթ անուն դպրոցէն: Վերջինս, Օր. Տամատեանը ուսուցչութեան հրաւիրած է: Փարիզի շատ մը թերթերը գովասանքով գրած են իր մասին:

ԿԻՊՐՈՍԷ հկած նամակէ մը կը հասկնանք թէ Վեր. Ս. Աղպապեանի մէկ նուաճն ետքը Տոքթ. Ս. Նիկողոսեան Նիկոսիոյ և Տոքթ. Ս. Մուրատեան Լաւնաքայի Աւետ. եկեղեցիներուն քիմի պատասխանատուութիւնը ստանձնած են: Կազմուած է նաև չորս հոգիներէ բաղկացեալ մասնախումբ մը, որ տունիքը կ'այցելէ և աւետարանչական գործ կը կատարէ: Մասնախումբի տնօրէններն են՝ Տիարք Յովհ. Վահկացի, Արեւ Տամպուրեան, Յարութիւն Մալեան, և Յովհ. Տէր Եղեկիէլեան:

ՍԵԼԱՆԻԿԷՆ մեր թղթակիցը կը գրէ թէ տեղիս Հայ Աւետ. եկեղեցիին Խ. Ե. Բ. Զանից Ընկերակցութիւնը Անաթոլիա Դուլէճի սրահին մէջ շատ յաջող կերպով ներկայացուցած է յայտնի պրագմատիկ Տիկ. Զ. Ասատուրի «Սրբունիւն»: Օր. Ա. Եսէնանընի ղեկավարութեամբ երգիչ խումբը երգած է ընկերութեան քայլերդը, ապա Տիար Ա. Ճարաճեան տրամին նիւթը պարզած է: Միջնարարներուն եղած են հրգեր և նուագներ: Անաթոլիա Դուլէճի նուագխումբի առաջնորդը Տիկ. Հօկս դաշնակի վրայ

նուագած է Շոփէնի «Փօլոնէզ»ը, իսկ Օր. Ա. Թօփալեան նուագած է Շոմանի «Փափիյոն»ը: Հակառակ գուլէճի գլխունուած վայրին (Պարիլաուսի) հեռաւորութեան ընդարձակ սրահը լեցուած է բազմութեամբ: Ընդհանուր երեկոյթը շատ լուրջ, կրթիչ և տպաւորիչ եղած է:

ՊՈՍՏՈՆԻ մէջ «Հայ Առեւտրականներու Ընկերութիւն» մը կազմուած է նպատակ ունենալով օգնել Հայ վաճառականին, արհեստագործին, արուեստագէտին, և գործաւորին դրամական փոխառութեամբ:

Կ. ՊՈԼՍՈՅ Հայ Քահանայից Միութիւնը որոշած է կրօնական ժողովին դիմելով խնդրել որ քահանաներու և քարոզչական արտօնութիւն տրուի: Սուրբայ մէջ քահանաները կը քարոզեն: Նոյն Միութիւնը պատրաստած է էջմիածնի Ընդ. Եկեղեցական ժողովին ներկայացնելու համար յիշատակագիր մը, որով ասպարէզ պիտի խնդրեն նախարարութեան բոլոր կարգերու հասնելու համար:

ՏԻԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՇԵԴՅԱՆ, որ Յունիս 12ին վախճանած էր, 5000 տուար կտակած է Նիւ Եորքի Հայ Աւետ. եկեղեցիին, 2000 տուար Ամերիկայի Հայ Աւետ. Ընկերակցութեան, և 2000 տուար ալ Հ. Բարեգործական Ը. Միութեան ի նպաստ նուաւարչէնի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ կառավարութիւնը իր Բաւրգ քաղաքացիներուն համար լատին տառերով այբուրէն մը շինած էր: Հիմա ալ, ինչպէս որ թերթերը կը գրեն, հայ տառերու ձեւը բարեփոխելու համար սկսած է մտածել:

ԱԼՊԱՆԻՈՅ մէջ հայկական փոքր գողութ մը կազմուած է և տնտեսական լաւ դիրքի տիրացած: Աղիքի վաճառականութիւնը 5-6 կեսաւրացի Հայ ընտանիքներու ձեռքը անցած է, ուրիշ առեւտրականներ և ազատ արուեստա-

կաններ ևս կը գտնուին: Հայերը հոս սիրուած են: Թագաւորական ընտանիքին հայթայթիչն ալ հայ մը եղած է: Տակաւին հկեղեցի և քարոց չեն կազմակերպած:

ՉԵԽՕ՝ ՍԼՈՎԱԿԻՈՅ մայրաքաղաքը Փրակայի մէջ գտնուած են 71 Հայ ուսանողներ որոնցմէ 39 ուսումնաւարտ եղած են, 8 ևս ուսումնաւարտ պիտի ըլլան. այլևայլ կերպերով ելածներն ալ հաշուի առնելով այս տարի 21 ուսանող կը մնայ կը գրեն թերթերը: Ասոնցմէ ոչ մէկը մտադրած չէ Չէխօ-Սլովաքիա հաստատուիլ:

ՏԻԿ. ԶԱՊԷԼ ԱՍՍԱՏՈՒՐ սիրուած և կարող հայ գրագիտուհին ծանր կերպով հիւանդացած է Կ. Պոլսոյ մէջ:

(Շարունակութիւն 208րդ էջէն)

Այս երեք օր տեւող ժողովին մէջ խօսած են Շուէտացի Տր. Նէանտըր, Անգլիացի C. F. Andrews, պուտտայական դաւանանքէ Ֆրանսացի տիկին մը, Յոյն Օրթոտոքս Եպիսկոպոս մը, Հնդկ Նեստորական մը, Հնդկ Բողոքական մը, Երկու Հինտուներ, մահմետական մը, Երկու Հրեաներ, Ամերիկացի կաթոլիկ մը և ուրիշ շատ մը Եւրոպացիներ: Ընդհանուրին կողմէ շեշտուած մէկ սկզբունքը սա եղած է թէ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՊԷՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԸ:

Ժողովը ամէնէն աւելի զբաղած է չորրորդ յանձնախումբին տեղեկագրովը, որ մշակած է ծրագիր մը խաղաղութեան համար կրօնքը գործնական նօթէն օգտագործելու աշխատանքին մասին: Շէյլըր Մէթիւզ, այս տեղեկագիրը նեկայացնողը, շեշտած է սա գա-

Ա. ՆԻ Մ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ՏՈՒՆԸ Ռէտիօ Սիթիի կողմէ պայմանագրութիւն մը ստացած է Միջազգային Երաժշտական Սրահին և Ռաքֆէլըր Թատրոնին պէտք եղած գորգերը հայթայթելու, թէպէտ երկրին մէջ գտնուող գորգի գործարաններուն գրեթէ բոլորն ալ իրենց պայմանները ներկայացուցած են,

ՏՈՒՐ. ԵՒ ՏԻԿ. Գ. ՍԱՐԳԻՍԵԱՆ կը յայտնեն թէ Ամերիկա բնակող կարգ մը բարեկամներու նուէրներովը գընւած դաշնակը, զոր իրենց հետը բերած էին, մեր ասկէ առաջ գրածին համեմատ էմմանուէլ հկեղեցիի համար չէ այլ նոյն հկեղեցիի Ե. Ք. Զանից Ընկ.ի համար նուիրուած է:

Պատարը թէ ձեթէ կրօնքը երբեք ազգեցութիւն մը պիտի ունենայ խաղաղութիւնը բերելու մէջ՝ պէտք է նկատուի առնէ պատերազմի ծաղում տողող պայմանները: Իբր միջոց յիշած է, 1) իւրաքանչիւր կրօնքի մէջ խաղաղասիրական գաղափարները երեւան հանել և տարածել, 2) այս գաղափարները ազգային քաղաքականութեանց մէջ ազգեցիկ ընելու համար կրթական և ընկերային կազմակերպութիւններ յառաջ բերել:

Առանց բացառութեան գրեթէ բոլոր կրօնքներն ալ այս կամ այն ձեւով և նպատակով պատերազմի ազդիւր եղած են: Մարդկային կեանքի մէջ առնուած մեծագոյն յառաջդիմական քայլ մըն է, երեւոյթին մէջ հակառակ շահեր ունեցող և յաճախ իրարու թշնամի կրօնները խաղաղութիւն գտնելու շուրջ հաւաքուած տեսնել:

Տ. Ճ. Խ.

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Սեպտեմբեր 23ին, առտուան ժամը 8ին դպրոցը բաց պիտի ըլլայ արձանագրութիւնը (50 դրուշ օուրիականի փոխարէն) կատարելու և դպրոցական թոշակի վճարումներու համար: Քննութիւնները և դասագիրքերու բաշխումը

պիտի կատարուին Սեպտեմբեր 26ին: Դասերը պիտի սկսին Սեպտեմբեր 27ին:

Այն աշակերտուհիները որոնք անյլիներէն դաս չաւանդող դպրոցներէն կուգան այդ գասին քննութիւնէն ազատ պիտի ըլլան, և իրենց պակասը լեցնելու համար մասնաւոր դասեր պիտի տրուին:



PREScribe
IODO-MALT — QUINO-MALT
IDEAL TONICS
FOR ALL



Իօտօ+Մալթ=Իօտօմալթ.

Իօտօմալթը գործածութիւնը զմայելի արդիւնք կ'ուտայ՝ թէ՛ իւրեւ կանխարգելիչ միջոց մը և թէ՛ իւրեւ բուժիչ, անհամար հիւանդութեանց մէջ, որոնց սկզբնաւորութիւնը հազիւ թէ հասկնալի դարձած է:

Իօտօմալթը սահմանաւած է բուժելու ամէն տեսակ մարսողական անկանոնութիւն, որ բաղմագան ձեւերով երեւան կուգայ, յանգելով երբեմն հիւծախտի նյութաւորութիւնը թոքախտի, դալկահարութեան, պնդեղակութեան և երբ անոնք

զանազան բարդութեանց, մասնաւորապէս անհամար քննութիւններէն թերի անհրաժեշտ են:

Քինօ+Մալթ=Քինօմալթ.

Քինօմալթը՝ անհրաժեշտ դարման մըն է, հետզհետէ յառաջացող նիհարութեան, օր կրնայ հետեւանքն ըլլալ օրէն ծայրայեղութեան մը, կամ չարաչար աշխատանքի:

Քինօմալթը անփոխարինելի է մանաւանդ՝ ուժաթափութեան և հիւծումի պարագաներուն, ինչպէս նաեւ հիւանդութեանէ մը վերջ, ապաքինման շրջանին համար:

Իօտօմալթը և Քինօմալթը ախորժակամ ըլլալով, դիւրաւ կրնան սոնել հոնք մանուկներ, տարէցներ, տիկիներ, և նոյն իսկ ամէնէն ներքաճաղ անձեր:

Զաւորահաճեցող համար.— Օրական երեք անգամ, մէյմէկ ապուրի զգօք: Մանուկներու համար.— Այս գեղաչափին կէսը:

Իօտօմալթը և Քինօմալթը կը ծախուին բոլոր յայտնի դեղարաններու մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԻՃԻ ԷՆԼԻԳ

صاحب الاجاز والمقر الممول القس ق. هارونيان